

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

«ԱՐՑԵՄԵՆՏ»

ՄԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾԱՎԱՆԻ
«ԱՐՑԵՄԵՆՏ» ՍՊԸ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՑԵՄԵՆՏԻ
ԳՈՐԾԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՑԵՄԵՆՏԻ
ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՇՐՋԱԿԱ
ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ԱՐՑԵՄԵՆՏ» ՍՊԸ
տնօրեն՝

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան – 2024թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ.....3

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....7

1 ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....8

2 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՎԻՃԱԿԸ.....26

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՊՈՏԵՆՑԻԱԼ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՈՒՄ, ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ ԵՎ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ.....52

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ.....77

5.ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ81

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Ներկայացվող սահմանումները և եզրույթները /տերմիններ/ բերվում են ՀՀ բնապահպանական ոլորտի օրենքներից և նորմատիվ փաստաթղթերից:

Շրջակա միջավայր` բնական և մարդածին տարրերի (մթնոլորտային օդ, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ` անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության և մշակույթի հուշարձաններ) և սոցիալական միջավայրի (մարդու առողջության և անվտանգության), գործունեների, նյութերի, երեւույթների ու գործընթացների ամբողջությունը և դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջև:

շրջակա միջավայրի վրա ազդեցություն` հիմնադրությամբ փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետեւանքով շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հնարավոր փոփոխությունները:

նախատեսվող գործունեություն` շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում:

ձեռնարկող` սույն օրենքի համաձայն` փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթուղթ մշակող, ընդունող, իրականացնող և (կամ) գործունեություն իրականացնող կամ պատվիրող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, իրավաբանական կամ ֆիզիկական անձ:

ազդակիր համայնք` շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն` ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք:

շահագրգիռ հանրություն` փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթղթի ընդունման և (կամ) նախատեսվող գործունեության իրականացման առնչությամբ հետաքրքրություն ցուցաբերող իրավաբանական և ֆիզիկական անձինք:

գործընթացի մասնակիցներ՝ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններ, ֆիզիկական ու իրավաբանական անձինք, ներառյալ՝ ազդակիր համայնք, շահագրգիռ հանրություն, որոնք, սույն օրենքի համաձայն, մասնակցում են գնահատումների եւ (կամ) փորձաքննության գործընթացին.

հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ.

հողային պրոֆիլ՝ հողագոյացման գործընթացում օրինաչափորեն փոփոխվող և գենետիկորեն կապակցված հողային հորիզոնների ամբողջություն.

խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր.

հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով.

հողի պոտենցիալ բերրի շերտ՝ հողային պրոֆիլի ստորին մասը, որն իր հատկություններով համընկնում է պոտենցիալ բերրի ապարների (բուսականության աճի համար սահմանափակ բարենպաստ քիմիական կամ ֆիզիկական հատկություններ ունեցող լեռնային ապարներ) հատկություններին.

հողածածկույթ՝ երկրի կամ դրա ցանկացած տարածքի մակերևույթը ծածկող հողերի ամբողջությունն է.

հողի բերրի շերտի հանման նորմեր՝ հողի հանվող բերրի շերտի խորությունը (սմ), ծավալը (m^3), զանգվածը (տ).

ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական.

ռեկուլտիվացիոն աշխատանքներ՝ օգտակար հանածոների արդյունահանման նախագծով կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով

երկրաբանական ուսումնասիրության ծրագրով շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ կամ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումներ.

պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձաններ՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային եւ բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը:

Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

"Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի սահմանումների համաձայն գործունեությունը հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննության:

Բնապահպանական ազդեցության գնահատման սույն հաշվետվությունը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և

գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) - Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ-522-Ն (ընդունված 1994 թ. և լրամշակված՝ 2022թ.) - կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

ՀՀ Ջրային օրենսգիրք (2002թ.). Օրենսգրքով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները: Օրենսգրքի նպատակն ազգային ջրային պաշարի պահպանությունն է, օգտագործելի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության պահանջների բավարարման, շրջակա միջավայրի էկոլոգիական կայունության

ապահովման, ինչպես նաև սույն օրենսգրքի խնդիրների լուծման համար իրավական հիմքերի ապահովումը:

«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ընդունված 23.11.1999 թ.), որը սահմանում է պետական քաղաքանությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ընդունված 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների Հայաստանի Հանրապետությունում պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքանությունը:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական,

առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը:

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

«Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» ՀՀ Օրենքը (28 ապրիլի 1999թ.) - օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքերը՝ քաղաքաշինական գործունեության բոլոր փուլերում քաղաքացիների, հասարակության ու պետության շահերը պաշտպանելու, օրենսդրական ակտերի, ստանդարտների ու կանոնների պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 781 որոշում, որով հաստատվել է ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին

ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնակավայրերի կանաչ գոտիների չափերին եվ տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի n 1318-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N 71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը:

ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N 72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը,

ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:

ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի «Ջրակոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին». N 64-Ն որոշում:

ՀՀ կառավարության 2011թ-ի սեպտեմբերի 8-ի «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու մասին» թիվ 1396-Ն որոշումը:

ՀՀ կառավարության 2017 թ-ի դեկտեմբերի 14-ի «ՀՈՂԵՐԻ ՌԵԿՈՒՐՏԻՎԱՅՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԽԱԽՏՎԱԾ ՀՈՂԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ԸՍՏ ՌԵԿՈՒՐՏԻՎԱՅՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի N 750-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 1643-Ն որոշումը:

ՀՀ կառավարության 2017 թ-ի նոյեմբերի 2-ի «ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՀԱՆՄԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՈՐՈՇՄԱՆԸ ԵՎ ՀԱՆՎԱԾ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՄԻ 20-Ի N 1026-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 1404-Ն որոշումը:

1. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1.1 Նախագծի հիմնական դրույթները


Նախատեսվող գործունեության նպատակը. ցեմենտի արտադրության արտադրամասի կառուցում և ցեմենտի արտադրություն:

Կառուցապատում.

Ըստ ցեմենտի արտադրության արտադրամասի կառուցապատման նախագծի կազմման ճարտարապետահատակագծային առաջադրանքի՝ հողամասի մակերեսը 8300քմ է, կառուցապատման մակերեսը՝ 24%, կանաչապատման մակերեսը՝ 76%, նախատեսվող շինության բարձրությունը՝ 15մ: Շինարարական աշխատանքների տևողությունը՝ 24 ամիս:



Տեղամասի փաստացի իրավիճակը:




Հայցվող տեղամասը Արտենի բնակավայրից գտնվում է 7100մ, Գետափ բնակավայրից՝ 7900մ, Լուսակն բնակավայրից՝ 12600մ հեռավորությունների վրա:



Հայցվող տեղամասը Արագածավան բնակավայրի բնակելի թաղամասից գտնվում է առնվազն 1300մ հեռավորության վրա:



Հատված կադաստրային քարտեզից, հայցվող տեղամասի ցուցադրմամբ:



Հատված նախագծի գլխավոր հատակագծից:

Հայցվող տեղամասի անկյունային կետերի կոորդինատներն են.

$$1 \text{ Y} = 8388094.3590 \quad X = 4466892.4429$$

$$2 \text{ Y} = 8388085.5410 \quad X = 4466902.6510$$

$$3 \text{ Y} = 8388083.3280 \quad X = 4466900.5560$$

4 Y =8388054.1720	X =4466934.9760
5 Y =8388055.8540	X =4466936.4570
6 Y =8388050.2280	X =4466942.5710
7 Y =8388047.0345	X =4466939.7205
8 Y =8387996.0430	X =4466996.3090
9 Y =8387963.5420	X =4466970.3690
10 Y =8388929.8952	X =4466993.6366
11 Y =8388939.5097	X =4467031.8566
12 Y =8388967.4737	X =4467064.9604
13 Y =8388967.6793	X =4467064.7419
14 Y =8388041.9074	X =4466985.8685
15 Y =8388068.6748	X =4466958.9089
16 Y =8388108.7221	X =4466916.5492
17 Y =8388107.8186	X =4466904.8424
18 Y =8388102.4061	X =4466899.3942

Նախատեսվող արտադրամասի տեխնիկական ցուցանիշներն են.

Արտադրամասը հատակագծումն ունի ուղղանկյունաձև տեսք 12.2 x 24.4մ առանցքային չափերով:

Շինությունն ունի հետևյալ ցուցանիշները՝

Արտաքին պատեր/երեսապատում – 400մմ/տուֆ քարի շարվածք,

Ներքին պատեր – 100-200մմ/բետոնե բլոկներ, սալիկներ և այլն,


Հատակներ – կերամիկական սալիկ, լամինատ և այլն,

Շինության բաարձրությունը – 15.0,

Տանիք/կոնստրուկտիվ մաս – լանջ/ազատ ջրհեռացում/մետաղական թիթեղ,

Շինության հիմնակմախք/ծածկ – միաձույլ երկաթբետոն/մոնոլիտ կամ պանել:

Նախատեսվում է տարածքը մաքրում և բարեկարգում:



Տարածքի կառուցապատումը կատարվելու է համաձայն՝ ՀՀ-ում գործող նորմատիվա-տեխնիկական, նախագծային և շինարարական նորմերին և առկա քաղաքաշինական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Նախապատրաստական աշխատանքներ.

- շին. հրապարակի կազմակերպում,
- հողային աշխատանքներ:

Շինարարական աշխատանքներ.

- հիմքերի իրականացում,
- հենապատի իրականացում,
- առաջին հարկի կարկասի և ծածկի իրականացում,
- երկրորդ հարկի կարկասի և ծածկի իրականացում,
- տանիքի ծածկի կարկասի և ծածկի իրականացում,
- աստիճանների պատրաստում,
- պատերի շարում,
- արտաքին և ներքին հարդարման աշխատանքներ,
- ինժ. գծերի թականացում և փորձարկում,
- պարսպի իրականացում,

- տարածքի մաքրում և բարեկարգում:

Հաշվի առնելով տեղանքի պայմանները, կազմակերպվեու է անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում՝ ղեկավարվելով ՀՀՇԼ IIIIV. 2008-ի դրույթներով:


Շինարարական աշխատանքների կատարման համար անհրաժեշտ են հետևյալ տեխնիկական միջոցները.

- ավտոկրունկ՝ 1 հատ,
- բեռնատար ավտոինքնաթափ՝ 1հատ,
- բետոնամղիչ՝ 1հատ
- էքսկավատոր՝ 1հատ,
- շարժական կոմպրեսոր՝ 1հատ,
- էլ. եռակցման սարք՝ 1հատ,
- ձեռքի էլեկտրական գործիքներ,
- ձեռքի մեխանիկական գործիքներ,
- ատաղագործական գործիքներ,
- ներկարարական գործիքներ:

Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ են հետևյալ աշխատանքային ռեսուրսները.

- ինժեներատեխնիկական անձնակազմ – 1մարդ,
- արհեստագործներ և բանվորներ 4 մարդ,
- մեքենավարներ – 2 մարդ:

Շինարարության փուլում արտադրամասի կառուցապատման համար նախատեսվում է շինարարական հրապարակ, որտեղ լինելու են.



- վերամբարձ կռունկ՝ 1 հատ,
- բետոնախառնիչ՝ 1 հատ,
- ժամանակավոր աշխատասենյակ՝ 1 հատ,
- ճաշարան 1 հատ,
- աղբի տարաներ 2 հատ,
- լուսարձակներ 6 հատ,
- հանդերձարան 1 հատ,
- շարժական սան հանգույց (բիոզուգարան)՝ լվացարանով՝ 1 հատ,
- շինարարական ավտոտրանսպորտի ելքի լվացման կետեր՝ 2 հատ,
- շինհրապարակի մուտքի և ելքի մոտ,
- հակահրդեհային վահանակ՝ 1 հատ:

Շինարարության փուլում կառույցն առանձնացվում է ժամանակավոր տեղադրվող վահանակային պատով:

Շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող 1,20X1,50 չափերի շարժական սանհագույցից (Բիոզուգարան): Աշխատանքների ավարտից հետո այն ապամոնտաժվելու է: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների լվացում՝ լվացման հարթակում: Անիվների լվացում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման հարթակի միջով՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ:

Շինհրապարակում անիվների լվացումից առաջացած, ինչպես նաև արտադրական հոսքաջրերը միավորվելու են մեկ բակային ջրահեռացման ցանցին: Արտադրական և անձրևաջրերից առաջացող մակերևութային հոսքաջրերը պլաստմասսե վերգետնյա խողովակներով հեռացվելու են դեպի շինհրապարակում տեղադրվող պարզարան:

Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ և հակահրդեհային անվտանգության միջոցներով՝ կրակմարիչներով:

Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր.

Ջուր: Շինարարության փուլում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ խմելու-կենցաղային նպատակով: Աշխատողների խմելու և կենցաղային նպատակների համար օգտագործվելու է բերովի ջուր՝ պայմանագրային հիմունքներով: Խմելու ջուրը նախատեսվում է բերել Արագածավան բնակավայրից: Ջրցանի համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով: Ջուրը լցվելու է տարածքում տեղադրվող 5տ տարողության բաքի մեջ: Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի: Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է հրդեհամարման, ջրցանի և անիվների լվացման համար: Շինարարության փուլում աշխատողների քանակը հերթափոխում կազմում է 7 մարդ, որից 1-ը՝ ինժիներատեխնիկական, 6-ը՝ բանվոր:

Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W = (n \times N + n1 \times N1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 1 մարդ

N– ԻՏՍՍ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³ օր/մարդ

n1 – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 6 մարդ

N1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³ օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 636 օր:

W = (1 x 0.016 + 6 x 0.025) x 636 = 105.58մ³ /շին. ժամ. կամ 0,17 մ³/օր:

բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

Մ1 = S1 x K1 x n x T,

որտեղ՝

S1 – ջրվող տարածքի մակերեսը 3650 մ², (շինհրապարակ, ճանապարհներ)

K1 – ջրի տեսակարար ծախսը 0.5լ/մ²,

n – ջրցանի թիվը 1 օրում, 3

T – ջրցանի և անիվների լվացման ժամանակահատվածը օրերով, 250,

Մ1 = 3650 x 0.5 x 3 x 250=1368,75 մ³ /շին. ժամ. կամ 5,475 մ³ /օր:

Անիվների լվացման համար ջրածախսը կկազմի 39.75մ³/շին.ժամ կամ 0.16մ³/օր:

Ընդամենը ջրի սպառումը շինարարության փուլում կլինի 1514.08 մ³ /շին. ժամ:

Հակահրդեհային կարիքների համար ջրի ծախսը հաշվարկված է 5,2լ/վրկ:

Նշված նպատակների համար անհրաժեշտ ջրառը նախատեսվում է իրականացնել արտադրամասի հարևանությամբ գտնվող «Լևադան» ՍՊԸ-ի արտադրական տարածքում գտնվող խորքային հորատանցքից, որի համար կկնքվեն համապատասխան ջրօգտագործման պայմանագրեր:

Նյութեր. ամրանային ձողերը և կմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն, ինչպես նաև անհրաժեշտ այլ շինարարական նյութերը բերվելու են համապատասխան տրանսպորտային միջոցներով և պահեստավորվելու են շինարարական հրապարակում:

Նախատեսվում է օգտագործել միաձույլ B25 դասի երկաթբետոն: Բետոնանյութը բերվելու է մասնագիտացված կազմակերպության բետոնախառնիչներով:

Բետոնանյութի մատակարարումը կկատարվի այն պարբերականությամբ, որպեսզի ապահովվի շինարարական աշխատանքների անընդհատությունը:

Շինարարության համար նախատեսված բոլոր նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված(լիցենզավորված) կազմակերպություններից:

Տարածքում շինանյութերը պահեստավորվելու է ժամանակավոր շինություններում՝ տակդիրների վրա: Շինարարական հրապարակում շինանյութերը կամ սորուն նյութերը պահեստավորվելու են ծածկի տակ:

Աղբահեռացում - Շինարարության ընթացքում կառաջանա շինաղբ՝ ընդամենը՝ 1457.0մ³ քանակով: Շինաղբը տեղափոխվելու է համայնքապետարանի կողմից հատկացված մինչև 5կմ հեռավորության վրա գտնվող աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով, լիցենզավորված կազմակերպությունների կողմից:

Շինարարության ընթացքում կառաջանա 840.0կգ/տարի, իսկ շահագործման փուլում՝ 1200.0կգ/տարի կենցաղային աղբ: Շինարարության փուլում տեղադրվելու են 2 հատ 1,5X1,0մ³, շահագործման փուլում՝ 4 հատ 1,5X1,0մ³ տարողության աղբարկղեր:

Բարեկարգում և կանաչապատում - Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում: Բարեկարգման աշխատանքները ներառում են ավազակոպճային աշխատանքներ, բազալտե եզրաքարերի, բետոնե դեկորատիվ սալիկների տեղադրում և բետոնապատում:

Ազատ տարածքներում՝ մոտ 6310.0քառ.մ մակերեսով տարածքի վրա նախատեսվում է իրականացնել կանաչապատում սիզախոտով՝ համատեղված ծաղիկներով և վարդերով:

Ավտոճանապարհները, մոտեցումները շուրջ 60.0քմ մակերեսով կասֆալտապատվեն:

Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ և սարքավորումներ. գործունեության կատարման շինարարության փուլում օգտագործվող հիմնական տեխնիկա-տրանսպորտային միջոցներն են.

- ավտոկրունկ՝ 1 հատ,
- բեռնատար ավտոինքնաթափ՝ 1 հատ,
- բետոնամղիչ՝ 1 հատ
- էքսկավատոր՝ 1 հատ,
- շարժական կոմպրեսոր՝ 1 հատ,
- էլ. եռակցման սարք՝ 1 հատ,

Շինարարական աշխատանքների՝ բեռնման-բեռնաթափման ժամանակ օգտագործվող բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է

համապատասխանեն պետական ստանդարտներին կամ տեխնիկական պայմաններին, համաձայն ՇՆ և Կ III-4-80* պահանջներին:

Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա 5⁰-ից ոչ ավել թեքություն:

Շինտեխնիկան լինելու է Կապալառու ընկերության սեփական տեխնիկական կամ անհրաժեշտության դեպքում վարձակալվելու են այլ կազմակերպություններից:

Մեքենաները կայանվելու են գործունեության տարածքում՝ շինհրապարակում:

Ժամանակացույց. Արտադրամասի կառուցման շինարարական աշխատանքները տևելու են մոտ 24 ամիս: Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվող աշխատանքները ներառված են ժամանակացույցում:

N	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ
1	Նախապատրաստական աշխատանքներ
2	Հողային աշխատանքներ
3	Ե/Բ հիմքերի նախապատրաստական աշխատանքներ
4	Ե/Բ ժապավենածև հիմքերի կառուցում
5	Հետլիցքի աշխատանքների իրականացում
6	Ե/Բ սյունակալների կառուցում
7	Մետաղական շրջանակների մոնտաժում
8	Միածույլ ե/բետոնե սալերի բետոնացում
9	Միածույլ ե/բետոնե սալերի հարդեցնող "տոպինգի" շերտ
10	Սենդվիչ-սալերով պատերի մոնտաժում
11	Սենդվիչ-սալերով ծածկի մոնտաժում
12	Սենդվիչ-սալերով միջնորմների մոնտաժում
13	Բարեկարգման աշխատանքներ
14	Բարեկարգման աշխատանքներ

ՄԵԾԱԾԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԿԵԼՏՐՈՒԹՅԱՆ ԲԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԼՔՆԵՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՍՆԱԿԱԳՈՒՅՑ

N	ԱՇԽԱՏԱԼՔՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԹՅԱՆԿ	ԸՆԴՀԱՆՈՒՐ 10 ԱՄՍ									
		1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Նախապատրաստական աշխատանքներ	■									
2	Հողային աշխատանքներ	■	■								
3	Ե/Բ հիմքերի նախապատրաստական աշխատանքներ		■	■							
4	Ե/Բ ժապավենածն հիմքերի կառուցում		■	■	■						
5	Հետիցքի աշխատանքների իրականացում		■	■	■	■					
6	Ե/Բ սյունակալների կառուցում		■	■	■	■	■				
7	Մետաղական շրջանակների մոնտաժում				■	■	■	■	■		
8	Միանույլ ե/բետոնե սալերի բետոնացում				■	■	■	■	■	■	
9	Միանույլ ե/բետոնե սալերի հարդեցնող "տուպինգի" շերտ				■	■	■	■	■	■	
10	Սենյակի-սալերով պատերի մոնտաժում					■	■	■	■	■	
11	Սենյակի-սալերով ծածկի մոնտաժում						■	■	■	■	
12	Սենյակի-սալերով միջնորմների մոնտաժում							■	■	■	
13	Բարեկարգման աշխատանքներ									■	■
14	Բարեկարգման աշխատանքներ									■	■

Շահագործում.


Նախատեսվում է կազմակերպել ցեմենտի արտադրություն՝ 25տ/ժամ կամ 73.0հազ.տ/տարի արտադրողականությամբ:

Ցեմենտի արտադրությունն իրականացվելու է չոր եղանակով, ինչը հանդիսանում է ավելի առաջատար, շրջակա միջավայրի վրա ազդեցության տեսակետից քիչ վնասակար, քանի որ նման տեխնալոգիայի պայմաններում բացակայում է կլիմայի ստացման պրոցեսը, ինչը նշանակում է, որ բացակայում է հումքը վառարանում թրծելու ընթացքը, համապատասխանաբար նվազում է դեպի մթնոլորտ արտանետվող վնասակար գազերի քանակը:

Նշված եղանակով ցեմենտի արտադրությունը ընկերության արտադրամասում ընթանալու է չինական արտադրության LIMING HEAVY INDUSTRY ընկերության հոսքագծով՝ այն ամբողջությամբ ավտոմատացված է:

Ցեմենտի արտադրության հոսքագիծը ունի հետևյալ տեսքը.

Requirements:
 Raw material: Clinker/Gypsum/Iron Ore
 Input Size: 0-20mm
 Output size: 45-50µm D80



14	силос	V1000m ³	1		
13	импульсный фильтр	DMC64A	1	4kW	
12	воздушный конвейер	XZ250-6m	1	1.1kW	
11	элеватор	NE50x22m	1	11kW	
10	импульсный фильтр	SLQM96-5	1	45kW	
9	воздушный конвейер	XZ250-10m	1	2.2kW	for Rejects
8	воздушный конвейер	XZ250-(6+10)m	1	2.2kW	For final cement
7	мельничный сепаратор	SLT-S-VI	1	37+160kW	
6	элеватор	NE100x23m	1	18.5kW	
5	шаровая мельница	QMJ2.6x13m	1	1000kW	
4	магнит	RCYD-5	1	1.5kW	
3	ленточный конвейер	B500x(10+20)m	1	11kW	
2.1	завдвижка	/	3		
2	весовой ленточный питатель	B500x2m	3	2.2kW	
1.1	Warehouse wall vibrator	CZQ1054	6	0.5kW	
1	Hopper	LC3500mmx2000mm	3		
No.	Name	Model	Qty	Power	Remark

Ցեմենտի արտադրական պրոցեսը հետևյալն է՝

Ցեմենտի արտադրության համար նախատեսված հումքի (կլինկեր՝ 85%, գիպս՝ 3-5%, պեռլիտ՝ 10-12%) բունկերներից համապատասխան բաժնեմասերով հումքը լցվում է ժապավենային փոխակրիչի վրա և տեղափոխվում դեպի աղաց, որտեղ պտտվող թմբուկում խառնվում է և ենթարկվում կոտորակման՝ մինչև համապատասխան չափսերի ստացումը: Կոտորատված, համապատասխան չափսերի հասցված համասեռ զանգվածը աղացից էլևատորով տեղափոխվում է դեպի սեպարատոր, որտեղ համախառ զանգվածը տարանջատվում է ըստ չափսերի: Խոշոր հատիկները սեպարատորից նորից վերադարձվում են աղաց՝ հետագա կոտորակման, իսկ նուրբ ցեմենտային փոշին թևքային գոտիչով հավաքվում և խողովակաշարով տեղափոխվում ցեմենտի կուտակման աշտարակ: Ցեմենտի աշտարակից ցեմենտը պարկերում փաթեթավորվելու նպատակով անցնում է թրթռամաղով, վերջնական մաղման համար, որից հետո մտնում է փաթեթավորման սարք՝ պարկավորման համար: Պարկավորումից հետո այն տեղափոխվում է պատրաստի արտադրանքի պահեստ՝ իրացման համար:

Հեռացվող փոշոտ օդը անցնում է թևքային գոտիչներով, և կուտակված փոշին նորից վերադարձվում է արտադրությանը: Այսպիսով, արտադրության այս մեթոդը կարելի է դասակարգել որպես քիչ թափոններով արտադրություն: Թևքային գոտիչները յուրաքանչյուր 15 րոպեն մեկ ինքնամաքվում են՝ թրթռման միջոցով: Կուտակված փոշին վերադարձվում է արտադրություն: Նախատեսվում է գոտիչներ փոխարինումը նորերով յուրաքանչյուր 6 ամիսը մեկ՝ տարին 2 անգամ:

Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր.

Ջուր: Շահագործման փուլում ջուրն օգտագործվելու է տարածքի ջրցանի, ցեմենտի արտադրության ընթացքում օգտագործվող պեռլիտի լցակույտի խոնավացման և անձնակազմի խմելու կենցաղային, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հրդեհաշիջման համար:

Աշխատողների խմելու և կենցաղային նպատակների համար օգտագործվելու է բերովի ջուր՝ պայմանագրային հիմունքներով: Ջրցանի համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով: Ջուրը լցվելու է տարածքում տեղադրվող 5տ տարողության բաքի մեջ: Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի: Տեխնիկական ջուրն ըստ

անհրաժեշտության օգտագործվելու է հրդեհամարման, ջրցանի և անիվների լվացման համար:

Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների լվացում՝ լվացման հարթակում: Անիվների լվացում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման հարթակի միջով՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ:

Շինհրապարակում անիվների լվացումից առաջացած, ինչպես նաև արտադրական հոսքաջրերը միավորվելու են մեկ բակային ջրհեռացման ցանցին և պլաստմասե վերգետնյա խողովակներով հեռացվելու են դեպի շինհրապարակում տեղադրված 1*1.5մ չափերի պարզարան :

Շահագործման փուլում աշխատողների քանակը հերթափոխում կազմում է 10 մարդ, որից 3-ը՝ ինժեներատեխնիկական, 7-ը՝ բանվոր:

ա) Անձնակազմի կենցաղային ջրածախսը կկազմի՝

$$W = (3 \times 0.016 + 7 \times 0.025) \times 365 = 81.4 \text{մ}^3 \text{ կամ } 0,22 \text{մ}^3/\text{օր:}$$

որտեղ՝ 365-ը աշխատանքային օրերի թիվն է՝

բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի՝

$$U = 2500 \times 0.5 \times 3 \times 250 = 937.5 \text{մ}^3 \text{ կամ } 3.75 \text{մ}^3/\text{օր:}$$

որտեղ՝

2500մ² – ջրվող տարածքի մակերեսն է (լցակույտ, արտադրական հրապարակ, ճանապարհներ)

0.5լ/ մ² - ջրի տեսակարար ծախսը,

3 - ջրցանի թիվը 1 օրում,

250օր–ջրցանի ժամանակահատվածը օրերով,

Նյութեր. որպես ցեմենտի հումք օգտագործվելու է կլինկեր, գիպս և պեռլիտ: Կլինկերը և գիպսը բերվելու են պատրաստի վիճակում, դրանց արտադրություն գործարանի տարածքում չի նախատեսվում, իսկ պեռլիտի ներկրումը իրականացվելու է բնակավայրի վարչական տարածքում գտնվող պեռլիտի հանքերից:

Հումքի մատակարարումը կկատարվի այն պարբերականությամբ, որպեսզի ապահովվի արտադրական աշխատանքների անընդհատությունը:

Ցեմենտի արտադրության համար նախատեսված բոլոր նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված (լիցենզավորված) կազմակերպությունների կողմից:

Տարածքում կլինկերը և գիպսը պահեստավորվելու են համապատասխան բունկերներում, իսկ պեռլիտը պահեստավորվելու են ծածկի տակ:

Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ և սարքավորումներ. գործունեության կատարման շահագործման փուլում օգտագործվող հիմնական տեխնիկա-տրանսպորտային միջոցներն են.

- 1 հատ ավտոինքնաթափ
- 1 հատ բուլդոզեր
- 0,5մ³ շերեփով 1 հատ էքսկավատոր
- 1 հատ ոչ ինքնաթափ
- եռակցող և էլեկտրական այլ գործիքներ:

Տեխնիկայի և սարքավորումների կայանման վայրերում նախատեսվում է ավազի կամ մանրախճի փռում՝ վառելիքի կամ քսայուղերի հնարավոր արտահոսքը հողային և ջրային ռեսուրսներ կանխելու նպատակով: Աղտոտված ավազը կամ մանրախճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և փոխարինվելու է նորով:

Տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է արտադրական տարածքից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Նախատեսվող գործունեության այլընտրանքային լուծումները. նախատեսվող գործունեության նպատակն է ցեմենտի արտադրության կազմակերպումը: Արտադրված ցեմենտը օգտագործվելու է շինարարության մեջ: Ցեմենտի արտադրությունը նախատեսվում է իրականացնել ճոր եղանակով, որը ցեմենտի արտադրության մեջ համարվում է ամենաժամանակակիցը և շրջակա միջավայրի վրա նվազագույն ազդեցություն ունեցողը: Նախատեսվող գործունեությանը որպես այլընտրանք հնարավոր է դիտարկել միայն դրանից հրաժարվելը: Աշխատանքներից հրաժարման (զրոկայական) տարբերակը դիտարկվում է որպես տնտեսապես ոչ նպատակահարմար: Ներկայումս շինանյութերի շուկայում արձանագրվել է ցեմենտի պահանջարկ, ինչը հանգեցրել է հումքի վաճառքի գների աճին և, ընդհանուր առմամբ,

շինարարության բնագավառում ընդհանուր գնաճին: ՀՀ Արագածոտնի մարզում գրանցվել է գյուղատնտեսական բնագավառում աշխատատեղերի կրճատում, ինչը պայմանավորված է արտադրանքի մթերման և արտավալյրերի օգտագործման հետ կապված խնդիրներով, ինչը առաջացրել է բազմաթիվ, հրատապ լուծում պահանջող սոցիալական խնդիրներ, մասնավորապես աշխատատեղերի ապահովման հետ կապված: Հետևաբար, արտադրամասի գործարկման հետ կապված երկարաժամկետ կտրվածքով ստեղծվելիք նոր աշխատատեղերը կնպաստեն մարզում, մասնավորապես Արագածավան բնակավայրում, գործազրկության նվազեցմանը և կենսամակարդակի կայուն աճին:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՎԻՃԱԿԸ

2.1 ՏԵՂԱԴԻՐՔԸ և ԼԱՆԴՇԱՖՏԸ

ՌԵԼԻԵՖԻ ՁԵՎԱԳՐԱԿԱՆ ՏԻՊԵՐ ԵՎ ՁԵՎԵՐ

Լեռնագրական տեսակետից հայցվող տարածքը հարում է Հայկական հրաբխային բարձրավանդակի Արագածի լեռնազանգվածի հարավային լանջերին՝ Թալինի սարավանդի հյուսիս-արևմտյան մասերին և բնութագրվում է բլրաալիքավոր ռելիեֆով:

Թալինի սարավանդի բարձրությունը՝ 1250-1800 մ: Կազմված է նեոգենի և չորրորդականի հրաբխային ապարներից: Մակերևույթը բլրաթմբային է, թույլ մասնատված: Կան պարազիտային կոներ, լավային հոսքեր, քարացրոններ: Մակերևույթի կարևոր տարրերից են Մաստարայի, Զարնջայի և Աշնակի հեղեղատները: Ցածրադիր մասերում բնական լանդշաֆտը կենսաանապատային է, բարձրադիր մասերում՝ լեռնատափաստանային: Կան տուֆի, պեմզայի, պեռլիտի պաշարներ: Անասնապահական, հացահատիկի մշակության, խաղողագործական և պտղաբուծական շրջան է: Մարավանդի լավային հոսքերը դեպի հարավ ծածկվում են Արարատյան դաշտի չորրորդական առաջացումներով: Մարավանդի մակերևույթին բարձրանում են բազմաթիվ խոշոր և մանր պարազիտիկ խարամային կոներ և մնացորդային լավային բարձրունքներ: Հյուսիսից սարավանդը երիզավորում են Թիրինկատար և Կաքավասար հրաբուխների անդեզիտադափտային լավաների հոսքը, որին բնորոշ է բլրաբեկորային մակերևույթ:


Բազմաբերդ-Կոշ-Շամիրամ կառուցվածքային գծի երկայնքով անդեզիտադագիտային լավային հոսքը ավարտվում է կտրուկ սանդղավանդակով: Լավային հոսքի ծայրամասերում քարտեզագրվել են բազմաթիվ գազային փքման կոներ:

Հարավային հատվածում սարավանդը կազմված է Կարմրաթառ և Դաշտաքար հրաբուխների տուֆերով և լավաներով, սարավանդի մակերեսին բնորոշ է ավելի հանգիստ, թույլ ալիքավոր ռելիեֆ:

ՌԵԼԻԵՖԻ ՁԵՎԱԳՐԱԿԱՆ ՏԻՊԵՐ ԵՎ ՁԵՎԵՐ



ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ԳԵՐԱԿՇՈՂ ԹԵՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Տ Ե Կ Տ Ո Ն Ի Կ Ա Ն



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ



Սողանքներ



Խոշոր սողանքային տարածքներ

Հողմնահարման գոտիներ



Ջերմաքիմիական



Ջերմակենսաքիմիական



Նեոտեկտոնական բարձրացումների հավասարագծերը (կմ)



Տեկտոնական խախտումներ


Գործարանի տարածքում սողանքային երևույթները բացակայում են:

Տարածաշրջանի անմիջական հարևանությամբ խոշոր խզումային ստրուկտուրաները փաստված չեն, նկատվում են միայն տարբեր ուղղվածության բազմաթիվ մանր տեկտոնական խախտումներ:

ՀՀ-ն գտնվում է ակտիվ երկրաշարժային գոտում: Հյուսիսից հարավ առանձնացվում են հետևյալ սեյսմիկ զոնաները. Մերձքուռյան, Սումխեթա-Ղարաբաղի, Մերձսևանյան, Կապան-Գոգորանի, Ծաղկունյաց-Զանգեզուրի, Երևան-

Օրդուբադի, Ուրծ-Վայքի: Հիմնականում նշված գոնաների սահմաններով է անցնում երկրկեղևի խորքային բեկվածքները, որոնցից ամենախոշորն են Սևան-Աքերայի, Շիրակ –Զանգեզուրի և Միջին Արաքսյան /Երևանյան/ բեկվածքները:

ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի՝ 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04- «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»: Այդ նորմերով սահմանվում են այն չափանիշները, որոնք պետք է դրվեն շենքերի ու կառուցվածքների նախագծման ու կառուցման ընթացքում /սեյսմակայունության հիմնական սկզբունքներ/: Սեյսմակայուն շինարարությունը իրականացվում է տարբերակված՝ երեք, ըստ ուժգնության աճող հաջորդականությամբ՝ 1, 2, 3 սեյսմիկ գոտիներում, որոնց համար գրունտի հորիզոնական արագացման մեծությունը համապատասխանաբար 300, 400 և 500 սմ/վրկ² է: Նույն հրամանի հավելվածում ներկայացված է ՀՀ բնակավայրերի ցուցակը ըստ սեյսմիկ գոտիների: Այդ ցուցակում Արագածավանի տարածքը և մոտակա բնակավայրերը գտնվում են 1-ին սեյսմիկ գոտում: Հայցվող տարածքին վերագրվում է գրունտի հորիզոնական արագացում $a=0.3g$ /գրունտային ստվարաշերտի վերին մակերևույթի վրա երկրաշարժի ժամանակ առաջացած արագացման մեծությունը հորիզոնական ուղղությամբ/:



Տարածաշրջանի սեյսմիկ գոտիավորման քարտեզ

2.2. ԿԼԻՄԱՆ

ՀՀ Արագածոտնի մարզի տարածքը, որը և Արարատյան հարթավայրում է, հանրապետության ամենամեծ կլիմայական գոտին է և հանդիսանում է Հայկական բարձրավանդակի ցածրադիր և պարփակ մասերից մեկը: Կլիման չոր է, խիստ

մայրցամաքային, բնորոշվում է սառը ձմեռներով և շոգ ամառներով, ինչպես նաև արևափայլի երկարատևությամբ:

Արտադրամասի տարածաշրջանի կլիմայական պայմանների նկարագրության համար օգտվել ենք ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024թ. հունվարի 15-ի N 03-Ն հրամանով հաստատված «Շինարարական կլիմայաբանություն», ՀՀՇՆ 22-01-2024 փաստաթղթից: Այդ փաստաթղթով սահմանում են կլիմայական պարամետրերը, որոնք կիրառվում են շենքերի և շինությունների, ջեռուցման, օդափոխության, օդի լավորման, ջրամատակարարման համակարգերի նախագծման, ինչպես նաև քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծման և կառուցապատման ժամանակ:

Ստորև ներկայացվում են Թալինի օդերևութաբանական կայանի երկարատև դիտարկման արդյունքները ըստ «Շինարարական կլիմայաբանություն» ՀՀՇՆ 22-01-2024 նորմի.

Օդի միջին ջերմաստիճանը

Կայանի բարձրությունը ծովի մակարդակից, մ	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
1637	-5.7	-4.1	1.0	7.5	12.3	16.7	20.8	21.0	16.7	10.2	3.3	-2.9	8.1	-26.1	37.5

Օդի հարաբերական խոնավությունը

Կայանի բարձրությունը ծովի մակարդակից, մ	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Միջին տարեկան, %	Հարաբերական խոնավությունը % միջին ամսական	
														Ամենացուրտ ամսվա	Ամենատաք ամսվա
1637	77	75	69	66	66	60	55	52	54	63	73	78	66	77	52

Մթնոլորտային տեղումները և ձնածածկը

Տեղումների քանակը, մմ													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին
միջին ամսական/ առավելագույն օրական														
Ըստ ամիսների														
Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան		
23	25	37	60	77	51	35	22	20	36	25	23	434	133	301
21	22	38	36	37	63	58	44	27	36	22	19	63		

Քամիները.

Վրտակողականություն	(տվ.) Դրանց ավտոմատացման արդյունքները	Միջին արագությունը, մ/վ	Կրկնելիությունը, %									Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հունիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր-փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ	
			Միջին արագությունը, մ/վ					ըստ ուղղությունների									
			Հյուսիսային	Հյուսիս-Արևելյան	Արևելյան	Հարավ Արևելյան	Հարավ	Հարավ-Արևմտյան	Արևմտյան	Հյուսիս Արևմտյան	Անորոշ						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	
Թալին	823,2	հունվար	29	9	13	27	11	3	3	5	50	1,5	ՀվԱրլ	3,2	ՀվԱրլ	2,9	
		2,4	2,2	2,6	2,9	2,1	2,2	2,6	3,6								
		22	8	13	27	15	4	4	7	33							2,2
		3,3	2,4	2,6	3,6	2,9	3,5	3,2	4,1								
31	8	9	25	12	3	3	8	36	2,2								
3,5	2,6	2,4	3,2	2,4	2,7	2,7	4,1										
հոկտեմբեր	31	9	10	22	15	3	3	7	42	1,8							
2,9	2,2	2,4	3,0	2,2	2,8	2,7	3,9										

Տարվա տաք ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը (մաս 1)

Բնակավայրի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C									
	ամենատաք օրվա միջին օրական ջերմաստիճանը		ամենա շոգ ամսվա միջինը	տարբեր ապահովվածությամբ (%) առավելագույն ջերմաստիճանը						դիտարկված բացարձակ առավելագույնը
	ապահովվածություն			ապահովվածություն, %						
	0.99	0.95	1	2	5	10	20	50		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
Թալին	30	28	21.6	38	37	36	35	34	33	38

Տարվա տաք ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը (մաս 2)

Բնակավայրի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C													
	օրական տատանումը							միջին օրական առավելագույն արժեքը, որը հնարավոր է 1 անգամ «ո» տարիների ընթացքում						
	առավելագույն օրական տատանումը, որը հնարավոր է 1 անգամ «ո» տարիների ընթացքում													
	2	5	10	20	50	100	«ո»	2	5	10	20	50	100	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Թալին	18	19	20	21	23	24	13	23.7	26	27	28	28	29	30

Տարվա ցուրտ ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը (մաս 1)

Բնակավայրի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C														Դիտար կված նվազագույնը
	ամենացուրտ օրվա			ամենացուրտ հնգօրյակի			ամենացուրտ ժամանակաշրջանի միջինը	ամենացուրտ ամիսների միջինը	տարբեր ապահովվածությամբ (%) նվազագույն ջերմաստիճանը						
	ապահովվածություն			ապահովվածություն					ապահովվածություն, %						
	0.98	0.95	0.92	0.98	0.95	0.92	1	2	5	10	20	50			
Թալին	-20	-18	-17	-18	-16	-15	-4.2	-6.6	-	-	-	-	-	-	-26

Տարվա ցուրտ ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը (մաս 2)

Բնակավայրի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C													
	օրական տատանումը							միջին օրական նվազագույն արժեքը, որը հնարավոր է 1 անգամ «ո» տարիների ընթացքում	«ո»					
	առավելագույն օրական տատանումը, որը հնարավոր է 1 անգամ «ո» տարիների ընթացքում								«ո»					
	2	5	10	20	50	100	2		5	10	20	50	100	
Թալին	14	17	19	21	22	23	8	-13	-16	-17	-19	-21	-22	

2.3 ՀՈՂԵՐԸ

Նախալեռնային գոտում տարածված են շագանակագույն, մեծ մասամբ քարքարոտ, էրոզացված հողերը, որոնց մակերեսային քարքարոտությունը կազմում է 70.3%, որից 18.8%-ը՝ թույլ քարքարոտ, 17.0%՝ միջակ քարքարոտ, 34.5 %-ը՝ ուժեղ քարքարոտ:


Շագանակագույն հողերն ձևավորվել են տիպիկ չոր տափաստանային բուսականության տակ, հրաբխային ապարների հողմահարված նյութերի, ինչպես նաև տեղակուտակ, ողողաբերուկ և հեղեղաբերուկ գոյացումների վրա:

Հողաշերտի հզորությունը միջին հաշվով տատանվում է միջինը 20սմ սահմաններում: Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին:

Հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով: Շագանակագույն հողերի ծավալային զանգվածը տատանվում է 1.24-1.48գ/սմ³-ի, տեսակարար զանգվածը՝ 2.50-2.65գ/սմ³-ի, ընդհանուր ծակոտկենությունը՝ 4.38-52.1, խոնավությունը՝ 20-30%-ի սահմաններում:

Կիսաանապատային գորշ հողերով ձևավորվել են տեղակուտակ, տեղակուտակ-ողողաբերուկային խճային և խճաբեկորային կարբոնատային մայր տեսակների վրա: Այս հողերը ունեն հիմնականում կավավազային մեխանիկական կազմ, բավա-կանաչափ կմախքային զանգվածի պարունակությամբ: Առանձին տեղերում հողի խորը շերտերում հաճախ բավական քանակությամբ ջրալույծ աղեր են կուտակվում (մինչև 1-1.5%), որոնք գլխավորապես ներկայացված են CaSO₄, MgSO₄ և այլ աղեր: Այս տիպի հողերին բնորոշ է հումուսի չնչին պարունակությունը (1-1.5%): Աչքի են ընկնում իրենց քարքարոտությամբ, հանդիպում են ինչպես մակերեսային, այնպես էլ թաղված և կիսաթաղված քարեր: Ռելիեֆի անհարթության, նվազ բուսականության և անբարելավ ֆիզիկական հատկությունների հետևանքով այս հողերը ենթարկվում են ջրային, մասամբ էլ քամու էռոզիայի:

Հողերի բնական տիպերի տարածման քարտեզ



Ստորև աղյուսակում ներկայացված են գորշ հողերի քիմիական հատկությունները:

Խորությունը, սմ	Հումուս, %	Ընդհանուր, %	CO ₂ , %	CaSO ₄ , %	Կլանված հիմքերի գումարը, մ.էկվ 100գ հողում	P ^H -ը ջրային քաշվածքում
0-8	2.10	0.19	1.3	0.05	22.0	8.0
8-21	1.81	0.132	4.7	0.08	30.5	8.3
21-32	1.55	0.115	10.6	0.5	23.6	8.2
32-65	0.87	0.088	15.5	0.8	18.3	8.1
65-140	0.22	-	2.2	42.1	-	7.3

Կախված ռելիեֆի պայմաններից և էռոզիայի ենթարկվածության աստիճանից՝ հանդիպում են ինչպես ավելի թեթև, այնպես էլ ծանր մեխանիկական կազմով հողեր:

Հայցվող տեղամասի տարածքի հողերը ըստ նպատակային նշանակության՝ արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական են, ըստ հողատեսքի՝ արդյունաբերական օբյեկտների:

Հայցվող տարածքը հանդիսանում է դեռևս ԽՍՀՄ տարիներին գործող երկաթ/բետոնե կոնստրուկցիաներ արտադրող գործարանի հատված, տարածքում հողաբուսական շերտը, ծառաթփային բուսականություն բացակայում է, առկա է շինություն՝ 762.34քմ մակերեսով (նախկինում հանդիսացել է արհեստանոց):

2.4 ՋՐԱՅԻՆ ԱՎԱԶԱՆԸ

Հայցվող տարածքում բացակայում են աղբյուրները և գետաջրերը: Մակերևութային ջրերը կապված են ժամանակավոր մթնոլորտային տեղումների հետ:

Հիմնական ջրագրական միավորը Սելավ Մաստարա գետն է, որը գտնվում է հայցվող շուրջ 1900մ հեռավորության վրա : Սելավ Մաստարայի ջրհավաք ավազանի մակերեսը կազմում է 1635 կմ²: Գետի ակունքն ընկած է Արագածի լեռնազանգվածի հարավային լեռնալանջերի վրա՝ 3100-3300մ բարձրություններում, իսկ ավազանի ամենացածր կետը ընկած է Մեծամոր գետի ակունքներին մոտ տարածքում՝ 849 մ բարձրության վրա:

Սելավ-Մաստարան իրենից ներկայացնում է ժամանակավոր գործող հեղեղատային գետահուն: Առկա վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ անձրևային 70 հորդացումների ժամանակ կարող է դիտվել 40 մ³/վ և ավելի էլք, ապա խոշոր սելավների ժամանակ կարող է դիտվել 170 մ³ /վ էլք (1955թ.):

Գետի ջրհավաք ավազանի որոշ հիդրոգրաֆիական բնութագրիչները ներկայացված են աղյուսակում:

Ակունքի նիշը, մ	Գետաբերանի նիշը, մ	Միջին բարձրություն, մ	Ավազանի մակերես, կմ ²	Երկարություն, կմ
3289	849	1517	1635	98

Սելավ Մաստարայի հոսքի ձևավորման մեջ մեծ է ձնածածկույթի դերը: Միջին հաշվով գետի սնուցման ավելի քան 40 %-ը բաժին է ընկնում ձնահալոցքային ջրերին, քանի որ գետային հոսքի ձևավորման համար ձյան պաշարների կուտակման հիմնական գոտին 1800-2800 մ ընկած բարձրություններն են, հոսքի մնացած ծավալի մեջ իր հսկայական դերն ունեն անձրևային ջրերը, և հատկապես հորդառատ անձևները, որոնք նպաստում են սելավների ձևավորմանը: Սակավաջուր ժամանակահատվածում գետը գրեթե չորանում է: Մաստարայի սելավները կրկնվում են մոտավորապես 2-3 տարին մեկ անգամ: Մաստարայի սելավի մասին տեղեկություններ կան դեռևս 1905թ., որոնք բոլորն էլ եղել են ցեխաքարային բնույթի: Սելավ Մաստարայի սելավային հոսքերը հիմնականում ձևավորվում են զարնանային և ամառային հորդառատ անձրևների հետևանքով, հազվադեպ նաև ձնահալոցքային ջրերից: Հիդրոլոգիական տարեգրերում առկա է տեղեկատվություն, որ Սելավ Մաստարայում դիտվել են 165-170մ³/վ սելավային հոսքեր:

Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքը համարվում է լավ ինֆիլտրացվող գոտի:

Ախուրյանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 11 դիտակետում:

Ախուրյան գետի ջրի որակը Ամասիա գյուղից ներքև մարտին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Գյումրի քաղաքից վերև և Բագարան գյուղից ներքև հատվածներում մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Գյումրի քաղաքից ներքև ջրի որակը մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Կարկաչուն գետի ջրի որակը գետաբերանում մարտին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):


Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատ քաղաքից հարավ փետրվարին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «վատ» (5-րդ դաս), Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք փետրվարին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «վատ» (5-րդ դաս), Ռանչպար գյուղից ներքև ջրի որակը փետրվարին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «անբավարար» (4-րդ դաս):

2.6 ԲՈՒՍԱԿԱՆ ԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Ներածություն

Ուսումնասիրվող շրջանը մտնում է Ապարանի ֆլորիստիկ շրջանի մեջ:

Արտադրամասի մոտակայքում բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան: Բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված տեսակներ չեն արձանագրվել:



Հայաստանի ֆլորիստիկ շրջանները (Таманян, Файвуш, 2009): Ապարանի ֆլորիստիկ շրջանը 5-րդ է:

Տարածքին բնորոշ է կիսաանապատային բուսականությունը:

Կիսաանապատային բուսականություն.

Արարատյան գոգավորության, նաև Զանգեզուրի, Մեղրիի ու Վայքի լեռնաշղթաների վրա (600-1500 մ բարձրություններում) գտնվող գրեթե բոլոր չոր, անջրդի հողատարածքները՝ դռերը, ծածկված են կիսաանապատային բուսականությամբ: Ի տարբերություն անապատների՝ այստեղ բուսական համակեցությունում զգալի տոկոս են կազմում էֆեմեր ճիմ առաջացնող դաշտավլուկազգիները (անապատասեզ, ցորնուկ, այծակն, դաշտավլուկ և այլն):

Տարածվում են կարճակյաց բույսերը, որոնք ունեն խորը առանցքային արմատներ և կյանքի համար անհրաժեշտ խոնավությունը վերցնում են հողի ստորին շերտերից, իսկ որտեղ նկատվում են գրունտային ջրերի ելքեր, տարածված են եղեգնուտները:

Հայաստանի կիսաանապատային բուսականության գերակշռող բույսերն են. հոտավետ օշինդր, Կապար փշոտ, Սիզախոտ, Նշենի Ֆենցիլի, Կոխիա, լերդախոտ, բորբոսատեսուկ, դաշտավլուկ, կապար, հազարատերևուկ, որոնք երբեմն առաջացնում են ինքնուրույն բուսական համակեցություններ:



Կիսաանապատային բուսականություն



Դաշտավլուկ

ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակներից Լուկաշինի համայնքի շրջակայքում հանդիպում է Ազագու օշինդրանմանը, որը աճում է ստորին լեռնային գոտում՝ 700-800 մ. բարձրությունների վրա, առուների ափերին, խոնավ վայրերում ու ձորակներում: Հաշվի առնելով հանգամանքը, որ նախագծվող տեղամասը գտնվում է Լուկաշինի համայնքից 5կմ հեռավորության վրա կարելի վստահաբար ասել, որ շինարարության, և հետագայում արտադրական աշխատանքները այդ բույսին չեն կարող վնասել: Արտադրամասի և հարակից տարածքներում արտադրական աշխատանքներ են իրականացվել տարբեր տարիների, տարբեր կազմակերպությունների կողմից: Տարածքը հանդիսանում է ինտենսիվ տնտեսական յուրացման գոտի: Տարածքը ամբողջությամբ զուրկ է բուսական ծածկույթից, հետևաբար ազդեցությունը կենսաբազմազանության վրա գրեթե զրոյական է:

Կենդանական աշխարհը շատ աղքատիկ է:

Հետագոտված տարածքը տեղակայված է կիսաանապատային և լեռնատափաստանային լանդշաֆտային գոտիների սահմանում՝ իրեն բնորոշ

կենդանական աշխարհով: Սակայն արտադրամասի բուն տարածքը ներկայացված է մարդածին խիստ ազդեցության ենթարկված տարածքներով, որոնց մեծ մասը եռոզացված են: Այդ տարածքներում կենդանական աշխարհը ներկայացված է սակավաթիվ տեսակներով: Արտադրամասի համար նախատեսված տարածքից մոտավորապես 500մ հեռավորությամբ անցնում են խոշոր ոռոգման ջրանցքներ, ուստի տարածքում դիտարկվել են նաև ջրային էկոհամակարգի հետ փոխկապակցված կենդանատեսակներ:

Հանրապետության տարածքում լայնորեն տարածված տեսակներից կարող են հանդիպել Փոքրասիական գորտ (*Rana macrocnemis* Boulenger, 1885), Փոքրասիական ծառագորտ (*Hyla savignyi* Audouin, 1827): Սողուններից այս տարածքում կարող է հանդիպել Գեղիբան օձազլխիկ (*Ophisops elegans* Ménétries, 1832), թռչուններից՝ Դաշտային արտույտը (*Alauda arvensis* Linnaeus, 1758), Մեծ ճուռակ (*Buteo buteo* (Linnaeus, 1758)), կաթնասուններից՝ Փոքր ճագարամուկ (*Allactaga elater* (Lichtenstein, 1828)), Փոքրասիական ճագարամուկ (*Allactaga williamsi* Thomas, 1897), Թփուտային դաշտամուկ (*Microtus majori* Thomas, 1906), Գորշ կամ եվրոպական նապաստակը (*Lepus europaeus* Pallas, 1778), Սովորական շնագայլը (*Canis aureus* Linnaeus, 1758), Գորշ գայլը (*Canis lupus* Linnaeus, 1758) և Պարսկական ավազամուկ (*Meriones persicus* (Blanford, 1875)):

Թվարկված կենդանիներից Փոքր ճագարամուկը գրանցված է ՀՀ Կարմիր գրքում: Սակայն մեր դիտարկումների ընթացքում տարածքում այս տեսակի կենդանիներ, դրանց բներ, արահետներ կամ դրանց կենսագործունեության արգասիքներ չեն հայտնաբերվել:

Եզրակացություն

Նշված տարածքում արտադրամասի շահագործման համար կենդանական աշխարհի առումով որևէ առարկություն չկա:

2.7 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴԻ ՈՐԱԿԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից:

Մթնոլորտային օդի մոնիտորինգի դիտակայան Արագածավանի տարածքում և հարակից շրջանում չկա: Որոշակի պատկերացում հայցվող տարածքի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Դրա համար ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մշակվել է ուղեցույց ձեռնարկ, ուր ներկայացված են մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշների կախվածությունը տվյալ բնակավայրի ազգաբնակչության քանակից:

Արտադրամասը գտնվում է Արագածավան բնակավայրի վարչական

Բնակչության քանակը (հազ.)	Որոշված նյութերի ֆոնային կոնցենտրացիաները (մգ/մ ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
50 -125	0,4	0,05	0,03	1,5
10 - 50	0,3	0,05	0,015	0,8
< 10	0,2	0,02	0,008	0,4

տարածքում, որտեղ մշտական բնակչությունը ըստ պաշտոնական տվյալների չի գերազանցում 10000 մարդ: Հետևաբար, արտադրամասի տարածքի համար որպես օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են՝ փոշի 0.2 մգ/մ³, ծծմբի երկօքսիդ 0.02 մգ/մ³, ազոտի երկօքսիդ 0.008 մգ/մ³ և ածխածնի օքսիդ 0.4 մգ/մ³:

Աղմուկի մակարդակ

Աղմուկը և թրթռումները կապված են լինելու տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է N2-III-11.3՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» սանիտարական նորմերով: Բնակելի տարածքում աղմուկի մակարդակի նորման կազմում է 45 դԲԱ: Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում աղմուկի և թրթռումների մակարդակը արտադրամասի հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Աղմուկի ազդեցությունը կանխելու նպատակով մշակել ժամանակացույց, արգելել գիշերային աշխատանքը, խուսափել աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից, անհրաժեշտության դեպքում տեղադրել խլացուցիչներ:

2.8 ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Հայցվող տարածքը, ինչպես նաև հարակից շրջանները ներառված չեն բնության հատուկ պահպանվող տարածքում: Բնության հատուկ պահպանվող տարածքներից ամենամոտ գտնվողը Արագածի ալպյան պետական արգելավայրն է, որը կազմավորվել է 1959 թվականի հունվարի 29-ի ՀՍՍՀ ՄՍ N 20 որոշումով, Արագած լեռան սառցադաշտային Քարի լճի և հարակից ալպյան մարգագետինների պահպանության նպատակով:

Գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզում՝ Արագած լեռնազանգվածի 3200-3500 մ բարձրություններում, զբաղեցնում է Արագածի հարավային տարածքը, ունի 300 հա տարածք:

Հայցվող տարածքը գտնվում է Արագածի ալպյան պետական արգելավայրից 40կմ դեպի հյուսիս-արևելք:



Արագածի ալպյան արգելավայր, բնության հատուկ պահպանվող տարածք, Հայաստանի Հանրապետության 24 արգելավայրերից մեկը:

2.8.1 Պատմության, մշակույթի և բնության հուշարձաններ և պատմամշակույթային միջավայր.

ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը:

ՀՀ Արագածոտնի մարզում են գտնվում հետևյալ հուշարձանները.

NN ը/կ	Անվանումը(նկարագիրը)	Տեղադիրքը
1.	«Տափակ Բլուր լիպարիտային գմբեթ	Արագածոտնի մարզ, Թաթուլ գյուղից 2.0 կմ հվ-արմ, հայցվող տարածքից 11կմ հեռավորության վրա
2.	«Բազալտե արև, եզակի ճառագայթաձև անջատում	Արագածոտնի մարզ, Բյուրական գյուղից 7 կմ հս, Արխաշան գետի ձախափնյա մասում Ամբերդ ամրոցի մոտ, հայցվող տարածքից մոտ 30կմ հեռավորության վրա
3.	«Տատիկ քարե բնական քանդակ	Արագածոտնի մարզ, Դաշտադեն գյուղի հվ-արլ եզրին,

		հայցվող տարածքից մոտ 11.5կմ հեռավորության վրա
4.	«Փոքր Արտենի հրաբուխ	Արագածոտնի մարզ, Արևուտ գյուղից 2.5 կմ հվ-արմ, հայցվող տարածքից մոտ 14.5կմ հեռավորության վրա
5.	«Քարե կարկուտ տեքստուրային առանձնահատուկ ներփակումներ	Արագածոտնի մարզ, Մարալանջ գյուղից մոտ 3.0 կմ հս-արմ, հայցվող տարածքից մոտ 48.5կմ հեռավորության վրա
6.	Արայի լեռան խառնարանը	Արագածոտնի մարզ, Արտաշավան գյուղից 6 կմ հս-արլ, հայցվող տարածքից մոտ 49կմ հեռավորության վրա
7.	«Անանուն ժայռ-մնացուկներ	Արագածոտնի մարզ, Մարալանջ գյուղից 4.5 կմ հվ-արմ, Արայի լեռ, հրաբխի հարավային լանջերին, հայցվող տարածքից մոտ 47կմ հեռավորության վրա
8.	«Անանուն էրոզիոն աշտարակ	Արագածոտնի մարզ, Մարալանջ գյուղից 4 կմ արմ, Արայի լեռան հրաբխի խառնարանում, հայցվող տարածքից մոտ 48կմ հեռավորության վրա
9.	«Չինգիլային դաշտ քարե կուտակումներ	Արագածոտնի մարզ, Քուչակ գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ, «Էլոյի բերդ» տանող ճանապարհին, հայցվող տարածքից մոտ 44կմ հեռավորության վրա
10.	«Մեծ Արտենի էքստրուզիվ կոն	Արագածոտնի մարզ, բնապատմական համալիր Մեծ Արտենի լեռ (2047մ), քարեդարյան (օլիգոցեն) հասակի եզակի հնագիտական հուշարձաններ, հայցվող տարածքից մոտ 11կմ հեռավորության վրա
11.	«Ամբերդ լիճ	Արագածոտնի մարզ, Բյուրականից մոտ 2.1 կմ հս-արմ, Արագած լեռան հվ-արմ մերձկատարային սարավանդին, հայցվող տարածքից մոտ 31կմ հեռավորության վրա
12.	«Լեսինգ լիճ	Արագածոտնի մարզ, Ծաղկաշեն գյուղից մոտ 11 կմ հս-արմ, Արագած լեռնազանգվածի հս-արլ լանջին, հայցվող տարածքից մոտ 40կմ հեռավորության վրա
13.	«Ումրոյ լիճ	Արագածոտնի մարզ, Ծաղկաշեն գյուղից մոտ 8 կմ հս-արմ, Արագած լեռնազանգվածի արլ լանջին, հայցվող տարածքից մոտ 44կմ հեռավորության վրա
14.	«Գեղարոտի ջրվեժ	Արագածոտնի մարզ, Արագած գյուղից 11 կմ հս-արմ, հայցվող տարածքից մոտ 42կմ հեռավորության վրա
15.	«Մեծ Արտենի էքստրուզիվ կոն	Արագածոտնի մարզ, Արևուտ գյուղից 2 կմ հվ-արմ, հայցվող տարածքից մոտ 14կմ հեռավորության վրա
16.	«Արտաշավան բնապատմական	Արագածոտնի մարզ, Արտաշավան գյուղի արլ եզրին,

	համալիր	հայցվող տարածքից մոտ 43.5կմ հեռավորության վրա
17.	«Աստվածընկալ հրաբխային տուֆերի ստվարաշերտ	Արագածոտնի մարզ, Հարթավան գյուղից մոտ 4 կմ դեպի արլ, Քասախ գետի կիրճի աջ լանջին, հայցվող տարածքից մոտ 44կմ հեռավորության վրա
18.	«Քասախի դարավանդներ	Արագածոտնի մարզ, Օհանավան գյուղի արլ եզրին, հայցվող տարածքից մոտ 43.5կմ հեռավորության վրա
19.	«Քասախի կիրճ	Արագածոտնի մարզ, Սաղմոսավան գյուղ, հայցվող տարածքից մոտ 43.5կմ հեռավորության վրա

Հաստատված են նաև ջրաերկրաբանական հուշարձաններ՝

1	<<Սրբի >> կամ <<Քառասուն>> աղբյուր	Արագածոտնի մարզ, Ապարան քաղաքի կենտրոնում, ծ.մ.-ից 1870մ բարձրության վրա
2	<<Քյահրիզ>> աղբյուր	Արագածոտնի մարզ, Գեղաձոր գյուղից 8,5կմ հվ-արմ, Գեղաձոր գետի վերին հոսանքի տրոգային կրկեսի վերին եզրին
3	<<Գեղաձոր>> աղբյուր	Արագածոտնի մարզ, Գեղաձոր գյուղից 7,5կմ հվ-արմ, Գեղաձոր գետի վերին հոսանքի տրոգային կրկեսում 9մ-ից 300մ բարձրությամբ վրա
4	<<Ջաղացի>> աղբյուր	Արագածոտնի մարզ, Ղազարավան գյուղից հվ ծայրամասում ծ.մ. 1180մ բարձրությամբ վրա

Արագածոտնի մարզում հաստատված բնության հուշարձանները հայցվող տարածքից գտնվում են 5-6կմ և ավելի հեռավորության վրա:

Ցեմենտի արտադրության աշխատանքների համար նախատեսվող տարածքում բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան:

2.9. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՀՀ Արագածոտնի մարզի տարածքը 2,773 քառ.կմ, ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը կազմում է (9.3 %): Բնակչության թվաքանակը 2023թ-ի տարեսկզբի դրությամբ՝ 125.7հազ. մարդ, այդ թվում՝ գյուղական բնակչություն՝ 98.9հազ. մարդ, քաղաքային՝ 26.8հազ. մարդ::

Գյուղատնտեսական նշանակության հողատարածքը՝ 218813.6հա է, այդ թվում՝ վարելահողեր 54352.2հա:

Մարզում առկա է 29 արհեստական ջրամբար՝ ամենամեծը Ապարանի ջրամբարն է՝ մակերեսը 7,9 քառ. կմ է, ընդհանուր ծավալը՝ 91մլն.մ³, օգտակարը՝ 81մլն.մ/խ, ջրթողունակությունը վայրկյանում 18 խորանարդ մետր: Ջրամբարի ամբարտակը հողային է, բարձրությունը՝ 50 մ, երկարությունը՝ 200 մ: Տարեկան մարզում առկա ոռոգման ջրի ծավալը կազմում է մոտ 520 մլն.մ³: Արագածի մերձգագաթային սարավանդի վրա գտնվում է Քարի լիճը: Նշված ծավալի ոռոգման ջրից տարեկան օգտագործվում է մոտ 85մլն.մ³-ն, առկա քանակության 16 %-ի չափով: Մնացած քանակությունը կորչում է գոլորշիացման տեսքով կամ դուրս գալիս մարզի տարածքից: Մարզի տարածքով է անցնում Արզնի-Շամիրամ ջրանցքը, գործում է նաև Թալինի ջրանցքը:

Բնակչության մեծամասնությունը կուտակված է Աշտարակի և Ապարանի տարածաշրջաններում, բնակչության խտությունը կազմել է՝ (36-89 մարդ 1 կմ²), այստեղ են բնակվում մարզի բնակչության շուրջ 64 % մակերեսով կազմում է մարզի 46.5 %: Բնակչության ամենացածր խտությունը Արագածի տարածաշրջանում է (3 մարդ 1 կմ²) և Թալինի տարածաշրջանում կազմել է (30 մարդ 1 կմ²):

ՀՀ Արագածոտնի մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակություն ունեցող 3 ավտոխճուղիները՝ Երևան – Աշտարակ – Թալին – Գյումրի, Երևան–Աշտարակ – Սպիտակ և Երևան – Արմավիր –Քարակերտ – Գյումրի:

Մարզի տարածքը արևմտյան հատվածով հատում է նաև ՀՀ գլխավոր երկաթուղին շուրջ 30 կմ, որը սակայն չի թողնում էական ազդեցություն մարզի տնտեսական զարգացման վրա:

Մարզի բնակչության շուրջ 87% հնարավորություն ունի օգտվելու կանոնավոր իրականացվող երթուղիներից:

Մարզի 114 համայնքներում գործում է «Հայփոստ» ՓԲԸ մասնաձյուղերը՝ ապահովելով մարզի համայնքների 100 % ծածկույթը:

Եթերային հեռուստահաղորդումներն իրականացվում են «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ Աշտարակի, Ապարանի և Թալինի տարածքային բաժնի կողմից, ապահովելով մարզի բնակավայրերի 92 % ծածկույթը:

Հեռարձակվում է թվային 8 ծրագիր, ինչպես նաև Աշտարակում՝ կաբելային «Աշտարակ Էլիտ TV» տեղական ծրագրերը: Մարզի ամբողջ տարածքը ընդգրկվել է թվային հեռուստահաղորդումների ծածկույթում: Հեռարձակվում է նաև «Հանրային ռադիոն», որը հասանելի է մարզի բոլոր բնակավայրերում:

Մարզի բոլոր բնակավայրերը միացված են էլեկտրական ցանցերին և ապահովված են հիմնականում անխափան և առանց լուրջ վթարների էլեկտրամատակարարմամբ: Մարզում առկա է էլեկտրաէներգիայի բաշխման զարգացած ցանց:

Ներկայումս ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված լիցենզիաների համաձայն, Արագածոտնի մարզում տարեկան 38.9 մլն. կՎտ/ժ էլեկտրական էներգիա են արտադրում 6 փոքր հիդրոէլեկտրակայաններ՝ մոտ 15.95 ՄՎտ ընդհանուր հզորությամբ, որը կազմում է Հայաստանի ՓՀԷԿ-երի արտադրած ընդհանուր 977 000 ՄՎտժ էներգիայի շուրջ 4 %:

Գազաֆիկացման մակարդակը մարզում բավականին ցածր է, 114 համայնքներից 61-ը (53,5 %) գազիֆիկացված են, որտեղ բնակվում են մարզի բնակիչների շուրջ 63,9 %:

Մարզի տարածքում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման համար գործունեություն է իրականացնում «Էկոլոգիա» ՎԿՀ-ի ՍՊԸ-ն, որը մարզի և հանրապետության այլ վայրերի բուժսպասարկման կազմակերպություններից՝ պայմանագրային սկզբունքով, հավաքում, տեղափոխում, պահպանում և վնասազերծում է ժամկետանց դեղորայքի, բժշկական կոշտ և հեղուկ, ինչպես նաև վիրահատություններից առաջացած թափոնները:

Միևնույն ժամանակ կոշտ կենցաղային թափոնների համար թվով 59 համայնքներում կատարվել է հողհատկացում, սակայն փաստացի գործում է 9 աղբավայր: Աղբահանությունը մասնագիտացված բեռնատարերով իրականացվում է միայն քաղաքային բնակավայրերում, մասնակի կերպով, իսկ գյուղական

բնակավայրերում միայն հարմարեցված տեխնիկական միջոցներով (ինքնաթափեր, լաֆետներ):

Մարզի բոլոր քաղաքներն ունեն կոյուղու համակարգ, որը սակայն միացված չէ գործող մաքրման կայաններին:

Մարզը տնային տնտեսությունների եկամուտների տեսանկյունից գտնվում է բավականին բարվոք վիճակում: Եկամուտի այս մակարդակը հիմնականում պայմանավորված է տրանսֆերտների ամենամեծ ծավալով, մարզի յուրաքանչյուր բնակչի ամսական եկամտի շուրջ 19.4% կազմում են տրանսֆերտները: Մարզի բնակչության եկամուտների շուրջ 23,80 %-ը կազմում է եկամուտը գյուղմթերքի և կենդանիների վաճառքից, 2,07 %-ը ինքնագրադավածությունից, 39,06 %-ը վարձու աշխատանքից, 14,90 %-ը պետական թոշակներ և նպաստներ և 2,05 %-ը այլ աղբյուրներից:

Արագածոտնի մարզում գրանցված են ավելի քան 4211 գործող (ակտիվ) ձեռնարկություններ, որոնք կազմում են հանրապետության մարզային ցուցանիշի մոտ 6.9 %-ը, այդ թվում՝ շուրջ 77 արտադրական ձեռնարկություններ և 562 առևտրային կազմակերպություններ: Խոշոր արտադրական ձեռնարկություններից են «Հայասի գրուպ» ԲԲԸ, «Թամարա Ֆրուտ» ՓԲԸ, «Աշտարակյան գինիներ» ՓԲԸ, «Գրեյդ Վելլի» ՓԲԸ, «Աշտարակի պոլիգրաֆիական գործարան» ԲԲԸ, «Աշտարակ-ձու» ՓԲԸ, «Ապարանի պանրի գործարան» ՓԲԸ, «Նաիրի լենդ» ՍՊԸ, «Գոլդեն գրեյպ Արմաս» ՍՊԸ և «Գնթունիք» ՍՊԸ:

Ձեռնարկությունների խտությունը 10 000 բնակչի հաշվով կազմում է 324.4:

ՀՀ Արագածոտնի մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերն են:

Արդյունաբերությունը մասնագիտացած է սննդամթերքի արտադրությունում (մսի և մսամթերքի մշակում և պահածոյացում, մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում, կաթնամթերքի, ըմպելիքի արտադրություն, խաղողի վերամշակման և գինու հումքի ստացում) ու շինանյութերի հանքավայրերի շահագործման ուղղություններում:

Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է բուսաբուծության (մասնավորապես հացահատիկային մշակաբույսերի արտադրություն) և անասնաբուծության մեջ: Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես բուսաբուծության (հացահատիկ, կարտոֆիլ, բազմամյա տնկարկներ, կերային մշակաբույսեր), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար:

Մարզի կրթական համակարգը ընդգրկում է նախադպրոցական հանրակրթական(տարրական, հիմնական և ավագ), միջի մասնագիտական (նախնական արհեստագործական և մասնագիտական) և բուհական համակարգերը:

Արագածավան. Արագածավան խոշորացված համայնքն իր մեջ ընդգրկում է Արագածավան,Արտենի, Գետափ, Լուսակն բնակավայրերը: Համայնքը գտնվում է Թալինի տարածաշրջանում, Թալինից մոտ 18 կմ հարավ-արեւմուտք: Մարզկենտրոնից գտնվում է 71 կմ հեռավորության վրա: Տեղադրված է Արմավիր-Գյումրի միջպետական նշանակության ճանապարհի վրա: Նախկինում ունեցել է Ալազյազ, Ալազյոզ անվանումները: Վերանվանվել է 1950 թ-ին: 1974 թ-ից եղել է քաղաքատիպ ավան, 1995թ-ից հետո՝ գյուղական բնակավայր: Համայնքի տարածքում գտնվում է 7-րդ դարին վերաբերող եկեղեցու ավերակները: Գյուղը գտնվում է ծովի մակարդակից 1255 մ բարձրության վրա: Կլիման մերձարեւադարձային, չափավոր ցամաքային է , աչքի է ընկնում ցամաքայնությամբ: Ամառները շոգ են եւ չոր, ձմեռները՝ ցուրտ, ամեն տարի հաստատվում է կայուն ձնածածկույթ: Հունվարյան միջին ջերմաստիճանը տատանվում է -5,-6-ի սահմաններում, հուլիսյանը՝ 22-24-ի սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 350-400մմ: Բնական լանդշաֆտները չոր տափաստաններն են: Խմելու նպատակով օգտագործվում է Ախուրյան գետի ջրերը, իսկ ոռոգման նպատակով ջրերը տեղափոխվում են Թալինի ջրանցքով:

Գյուղն ունի 1022 տնտեսություն: Ունի դպրոց, բուժկետ, կապի հանգույց:

Այստեղ է գտնվում «Արագած պեռլիտ» ձեռնարկությունը, որն օգտագործում է սեփական հումքը: Համայնքում գործում է նաև գինու գործարան:

Գյուղատնտեսության մեջ մեծ բաժին ունի բուսաբուծությունը: Մշակում են հացահատիկային, կերային, բանջարաբոստանային կուլտուրաներ: Զբաղվում են պտուղների աճեցմամբ, բազմամյա տնկարկները գտնվում են տնամերձ հողակտորներում: Համայնքային հողերի մոտ 1/3-ը վարելահողերն են: Արոտավայրերը զբաղեցնում են պահուստային հողերի շուրջ 57%: Բուծում են մանր եւ խոշոր եղջերավոր անասուններ: Ունի կաթի մշակման եւ կաթնամթերքի արտադրության կետ:

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՊՈՏԵՆՑԻԱԼ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ, ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ ԵՎ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Գործունեության իրականացման ենթակա տարածքը գտնվում է Արագածոտնի մարզի Արագածավան բնակավայրի վարչական տարածքում: Նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կառաջանան շինարարության և արտադրամասի շահագործման փուլերում՝ քանդման, հողային աշխատանքների, մեքենաների և շինտեխնիկայի շահագործումից, ցեմենտի արտադրության ժամանակ առաջացող ծխազագերի արտանետումների, աղմուկի մակարդակի ավելացման և մեքենաների տեղաշարժի ժամանակ, որոնք կլինեն կառավարելի:

Այն ունենալու է սոցիալական դրական ազդեցություն (աշխատատեղ և բնակչության եկամուտների ավելացում, համայնքի սպասարկման ոլորտի բարելավում):

Սույն հաշվետվությամբ նախատեսվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ՝ բնապահպանական կառավարման պլան, որոնց ճիշտ կիրառման

արդյունքում գործունեության իրականացման հետևանքները շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա կլինեն նվազագույնը:

Շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնք կապված են լինելու օդային ավազան արտանետումների, հողային և ջրային ռեսուրսների աղտոտման, ինչպես նաև տրանսպորտային միջոցների և սարքավորումների աշխատելու ընթացքում հողային և ջրային ռեսուրսների մեջ յուղերի հնարավոր ներթափանցման, աղմուկի մակարդակի բարձրացման, թափոնների կառավարման հետ:

3.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ

Գործունեության իրականացման շինարարության և արտադրության փուլերում լինելու են օդային ավազան արտանետումներ՝ տրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում ծխագազերի և հողային աշխատանքների (փորման, բեռնման, հարթեցման) ընթացքում, ցեմենտի արտադրության, ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով:

Շինարարության փուլում օդային ավազանի հնարավոր աղտոտվածությունը լինելու է կարճաժամկետ և թույլատրելի նորմայի սահմաններում: Շահագործման փուլում դեպի օդային ավազան արտանետումները՝ ի շնորհիվ արտադրության փակ համակարգի, փոշու տեսքով, լինելու է նվազագույնը և կառավարելի: Շինարարության և շահագործման ընթացքում, հատկապես չոր և շոգ եղանակներին, կատարվելու են շինհրապարակի, արտադրական հրապարակի և ճանապարհի փոշենստեցման աշխատանքներ՝ ջրցան մեքենայով:

Շինարարության և արտադրության փուլերում հարակից տարածքներում ընկերության կողմից կիրականացվի օդի աղտոտվածության գործիքային չափումներ:

Օդային ավազան արտանետումների քանակը մեղմելու, մթնոլորտային օդի որակի վրա հնարավոր ազդեցությունը կրճատելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական և արտադրական աշխատանքների ընթացքում ըստ անհրաժեշտության կատարվելու է գրունտի խոնավեցում և ճանապարհների ջրցան,
- մեքենաները շին. հրապարակ մտնելու և դուրս գալու են մաքուր վիճակում,
- օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում,
- բացառվելու են անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով կատարվելու են պարբերաբար ստուգումներ,
- գործունեության վայր շինանյութերի և սորուն նյութերի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով,
- շինհրապարակում սորուն նյութերը պահվելու են ժամանակավոր ծածկի տակ, ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,
- շինհրապարակը կազմակերպվելու է ցանկապատով,
- բացառվելու է տարածքում թափոնների այրումը:

3.2 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Նախատեսվող գործունեության իրականացման համար նախատեսվում է շինարարության փուլում 1925,մ³ ծավալի հողային աշխատանքների կատարում: Հողային զանգվածն առաջանալու է արտադրամասի հիմքերի, ժամանակավոր կառույցների տեղադրման, ջրամատակարարման և ջրահեռացման, հրդեհաշիջման, գազմատակարարման, էներգամատակարարման համակարգերի կառուցման նախատեսվող աշխատանքներից: Հողային աշխատանքներից հանված հողը՝ հողային գրունտ, շինարարության ընթացքում օգտագործվելու է տարածքի հարթեցման և լիցք անելու համար: Իսկ գրունտները, որոնք կպարունակեն խոշոր քարաբեկորներ, շինադրի հետ կտեղափոխվեն համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Գործունեության վայրում բացակայում է բուսահողը, որի պատճառով բուսահողի պահպանման միջոցառումներ չեն նախատեսվում: Գործունեության իրականացման հետևանքով հողային ռեսուրսների պահպանությանն ուղղված նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների ընթացքում հողային գրունտն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով,

- հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրապարակում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,

- շինհրապարակը ապահովված է լինելու արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար,

- շինարարական և ցեմենտի արտադրության նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա,

- նվազագույնի է հասցվելու շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը,

- օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,

- մեքենաների անիվների լվացումը կատարվելու է անիվների լվացման հարթակում: Բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարվելու է մինչ շինհրապարակից վերջիններիս դուրս գալը:

3.3 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Նախատեսվող գործունեության տարածքն աղքատ է գրունտային ջրերից: Համաձայն երկրաբանական ուսումնասիրությունների՝ տեղամասում փորված հորատանցքներով մինչև 5,4 մետր խորությամբ ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել: Կառուցապատվող տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ

առուներ: Ուստի մակերևութային և գրունտային ջրերի վրա ուղղակի ազդեցություն չի կանխատեսվում: Շինարարական և արտադրական աշխատանքները կատարվելու են ցանկապատված հրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները ջրային ռեսուրսներ:

Գործունեության իրականացման ընթացքում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու նպատակով նախատեսվում է.

- փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,
- տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացման հոսքաջրերը ներքին բակային ցանցով ուղղվելու են շինհրապարակում տեղադրված պարզարան,
- անձրևաջրերը և շինարարական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող 1*1.5մ չափերի պարզարան,
- պարզարանում մեխանիկական նստեցման հետևանքով առաջացած տիղմը՝ որպես շինաղբ, ժամանակ առ ժամանակ տեղափոխվելու է աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով,
- ջրցանման համար օգտագործվելու է միայն տեխնիկական որակի ջուր և պարզարանում կուտակված ջուրը,
- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կետերում,
- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում:

Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվելու է.

- շինարարության և արտադրության փուլերում աշխատողներն օգտվելու են տարածքում առկա բիոզուգարանից,
- բիոզուգարանի մաքրումը կատարվելու է համապատասխան լիցենզիա ունեցող մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

3.4 ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գործունեության ենթակա տարածքը գտնվում է կառուցապատման գոտում:

Բուսական աշխարհ. Տարածքն արդեն ենթարկված է անտրոպոգեն ազդեցությունների, տարածքը կառուցապատված է, բուսականությունը բացակայում է:

Կենդանական աշխարհ. գործունեության ենթակա տարածքն արդեն ենթարկվել է մարդկային գործունեության ազդեցությանը:

Գործունեության ենթակա և հարակից տարածքներն արդեն կառուցապատված են, ուստի մարդկային գործունի, երթևեկության՝ մեքենաների շարժի, աղմուկի պայմաններում հնարավոր չի կենդանատեսակների, բնադրավայրերի, միգրացիոն ուղիների, ինչպես նաև ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների և կենդանատեսակների առկայությունը:

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է բնակավայրի տարածքում, կենսաբազմազանությանը վտանգ չի սպառնում:

3.5 ԹԱՓՈՆՆԵՐ

Գործունեության իրականացման հետևանքով շինարարության և արտադրության փուլերում առաջանալու են կոշտ թափոններ.

Շինարարության փուլ.

- Շարժիչների բանեցված յուղեր, 1.0տ/տարի՝

դասիչ՝ 5410020102033

բաղադրությունը՝ նավթ, պարաֆիններ, սինթետիկ միացություններ,

բնութագիրը՝ հրդեհավտանգ է, առաջացնում են հողի և ջրի աղտոտում:

Թափոններն առաջանում են ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների շարժիչների շահագործման արդյունքում:

- Դիզելային յուղերի մնացորդներ, 0.3տ/տարի՝

դասիչ՝ 5410030302033

բաղադրությունը՝ նավթ, պարաֆիններ, սինթետիկ միացություններ,

բնութագիրը՝ հրդեհավտանգ է, առաջացնում են հողի և ջրի աղտոտում:
Թափոնները առաջանում են մեխանիզմների շահագործման արդյունքում:
Օգտագործված յուղերը ու քսուկները հավաքվում են առանձին տարրաների
մեջ և հանձնվում վերամշակման կետեր:

- Բանեցված դողածածկաններ, 0.5տ/տարի՝

դասիչ՝ 5750020213004

բաղադրությունը՝ ուտին, մետաղյա լարեր,

բնութագիրը՝ հրդեհավտանգ է:

Թափոններն առաջանում են ավտոտրանսպորտային և տեխնիկական
միջոցների շահագործման արդյունքում:

- Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան, 30կգ/տարի՝

դասիչ՝ 9211010013012

բաղադրությունը՝ կապար պարունակող ցանցեր, կապարի օքսիդներ,
թթուներ, պլաստմասսա,

բնութագիրը՝ թունավոր է շրջակա միջավայրի համար:

Թափոնները առաջանում են ավտոտրանսպորտային միջոցների
շահագործման արդյունքում:

Թափոնները հավաքվում և պահպանվում են իրենց համար նախատեսված
տարածքներում՝ հետագայում վերամշակմամբ զբաղվող լիցենզավորված
կազմակերպություններին վաճառելու համար:

- Շինարարական նյութերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով
(վտանգավորության դաս IV դաս, ծածկագիր՝ 91200600 01 00 0)՝ 1457.0մ³ ծավալով,

- Շենքի քանդումից առաջացած շինարարական աղբ՝ (վտանգավորության դաս
IV դաս, ծածկագիր՝ 912000600 01 004)՝ 57.0մ³ ծավալով,

- Կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ՝ (ծածկագիր՝
91200400 0100 4, վտանգավորության 4 դաս) 840.0կգ/տարի:

Շինարարության փուլում շինարարական աղբը կուտակվելու է
համապատասխան անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ և տեղափոխվելու է

Թալինի համայնքապետարանի հետ համաձայնեցված՝ 5կմ հեռավորության վրա գտնվող աղբավայր: Շինարարության փուլում առաջացող կենցաղային աղբը կուտակվելու է 2 հատ 1.5x1.0մ³ մետաղական կամ պլաստմասե աղբահավաք տարողությունների մեջ:

Շահագործման փուլ.

-- Շարժիչների բանեցված յուղեր, 0.7տ/տարի՝

դասիչ՝ 5410020102033

բաղադրությունը՝ նավթ, պարաֆիններ, սինթետիկ միացություններ,

բնութագիրը՝ հրդեհավտանգ է, առաջացնում են հողի և ջրի աղտոտում:

Թափոններն առաջանում են ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների շարժիչների շահագործման արդյունքում:

- Դիզելային յուղերի մնացորդներ, 0.5տ/տարի՝

դասիչ՝ 5410030302033

բաղադրությունը՝ նավթ, պարաֆիններ, սինթետիկ միացություններ,

բնութագիրը՝ հրդեհավտանգ է, առաջացնում են հողի և ջրի աղտոտում:

Թափոնները առաջանում են մեխանիզմների շահագործման արդյունքում:

Օգտագործված յուղերը ու քսուկները հավաքվում են առանձին տարրաների մեջ և հանձնվում վերամշակման կետեր:

- Բանեցված դողածածկաններ, 0.6տ/տարի՝

դասիչ՝ 5750020213004

բաղադրությունը՝ ռետին, մետաղյա լարեր,

բնութագիրը՝ հրդեհավտանգ է:

Թափոններն առաջանում են ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների շահագործման արդյունքում:

Թափոնները հավաքվում և պահպանվում են իրենց համար նախատեսված տարածքներում՝ հետագայում վերամշակող ընկերություններին վաճառելու համար:

- Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան, 50կգ/տարի՝

դասիչ՝ 9211010013012

բաղադրությունը՝ կապար պարունակող ցանցեր, կապարի օքսիդներ, թթուներ, պլաստմասսա,

բնութագիրը՝ թունավոր է շրջակա միջավայրի համար:

Թափոնները առաջանում են ավտոտրանսպորտային միջոցների շահագործման արդյունքում:

Թափոնները հավաքվում և պահպանվում են իրենց համար նախատեսված տարածքներում՝ հետագայում վերամշակող ընկերություններին վաճառելու համար:

- կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ՝ (ծածկագիր՝ 91200400 0100 4, վտանգավորության 4 դաս) 1200.0կգ/տարի: Յեմենտի արտադրության փուլերում առաջացող կենցաղային աղբը կուտակվելու է 4 հաս 1.5x1.0մ³ մետաղական կամ պլաստմասե աղբահավաք տարողությունների մեջ:

Շինարարական և կենցաղային աղբը պարբերաբար հեռացվելու են մասնագիտական ծառայությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարության և արտադրության փուլերում թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ է պահվելու թափոնների կուտակումներից, շին հրապարակի տարածքում հստակեցվելու է շին աղբի նախնական կուտակման վայրը, չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը,

- շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր,

- շինաղբի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկով ապահովված բեռնատարներով, կենցաղային աղբի և շինաղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության,

- շինարարության և շահագործման փուլերում կենցաղային աղբը հավաքվելու է տարածքում տեղադրված աղբարկղերի մեջ և հատուկ աղբահավաք

ծառայությունների կողմից մեքենաներով տեղափոխվելու է նախատեսված աղբավայր՝ կենցաղային աղբի տեղափոխման պայմանագրի կնքումից հետո,

- բացառվելու է աղբի կուտակումը շփհրապարակից դուրս՝ այլ բնակելի և հասարակական տարածքներում,

- շինարարական նյութերի մնացորդները(մետաղական մասեր) և վտանգավոր նյութերը և թափոնները հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից:

- արտադրության ընթացքում նախատեսվում են միայն կենցաղային թափոններ, որոնք կտեղադրվեն համապատասխան աղբարկղերում և պարբերաբար հեռացվելու են աղբավայրեր:

ՀՆԱՐԱՎՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ

Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման հաշվարկը կատարվում է ըստ ՀՀ կառավարության 27.05.2015թ-ի թիվ 764-ն « ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» որոշման:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատումն իրականացվում է ըստ շրջակա միջավայրի բաղադրիչների:

Հնարավոր տնտեսական վնասը հաշվարկվում է՝

$$ՎՏ= ՀԱԳ + ՋԱԳ + ՕԱԳ,$$

որտեղ՝

ՎՏ-ն հնարավոր տնտեսական վնասն է դրամային արտահայտությամբ,

ՀԱԳ-ն հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով (բնական միջավայրի աղտոտում, բնական ռեսուրսների աղքատացում, էկոհամակարգերի քայքայմանը կամ վնասմանը հանգեցնող շրջակա միջավայրի բացասական փոփոխություններ) պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 92-Ն_{ուղղ.} որոշման համաձայն:

Հաշվի առնելով, որ հայցվող տարածքը հանդիսանում է նախկին ե/բ կոնստրուկցիաների գործարանի տարածք՝ հողային ռեսուրսների վրա ազդեցություն չի նախատեսվում ՀԱԳ =0.0 հազ. ՀՀ դրամ

ՋԱԳ-ը ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության ուղղակի և անուղղակի ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի N 1110-Ն որոշման համաձայն: Ջրային ռեսուրսների վրա ազդեցություն չի նախատեսվում, ՋԱԳ =0.0 ՀՀ դրամ

ՕԱԳ-ն մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 91-Ն որոշման համաձայն:

Ցեմենտի արտադրության ընթացքում նախատեսվում են փոշու հետևյալ արտանետումները.

1. Ավտոտրանսպորտի աշխատանք.

Անջատվող փոշու ընդհանուր քանակը ավտոտրանսպորտի աշխատանքի ժամանակ որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$Q_1 = \frac{C_1 \times C_2 \times C_3 \times N \times L \times q_1 \times C_6 \times C_7}{3600.0} + C_4 \times C_5 \times C_6 \times q^{1/2} \times F_0 \times n, \text{ գր/վրկ}$$

Որտեղ՝

C₁ = 1.2 – ավտոտրանսպորտի միջին բեռնատարողությունը հաշվի առնող գործակից;

C₂ = 1.4 – ավտոմեքենայի միջին արագությունը հաշվի առնող գործակից;

C₃ = 1.0 - ավտոճանապարհների վիճակը հաշվի առնող գործակից;

C₄=1.5-ավտոմեքենայի թափքում տեղափոխվող բեռի պրոֆիլը հաշվի առնող գործակից;

C₅=1.0– նյութի շրջափչման արագությունը հաշվի առնող գործակից;

$C_6 = 0.6$ – նյութի մերձմակերևույթային շերտի խոնավությունը հաշվի առնող գործակից;

$N=1.0$ -ավտոտրանսպորտային միջոցների անցումների թիվն է 1 ժամում;

$L = 0.5$ կմ – տրանսպորտի 1 երթի ընդհանուր միջին երկարությունը;

$q_1 = 1450.0$ – 1.0կմ վազքի ժամանակ փոշու առաջացումը;

$q_{1/2} = 0.002q/v^2$ – թափքում նյութի միավոր մակերեսից փոշու առաջացումն է;

$F_0 = 10.0$ մ² – փոշեառաջացման առավելագույն մակերեսը ավտոինքնաթափի թափքում;

$n = 1.0$ - արտադրամասում աշխատող ավտոմեքենաների քանակը;

$C_7 = 0.01$ –մթնոլորտ անցնող փոշու քանակը հաշվի առնող գործակից:

Այսպիսով՝

$$Q_1 = \frac{1.2 \times 1.4 \times 1.0 \times 1.0 \times 0.5 \times 1450.0 \times 0.6 \times 0.01}{3600.0} + 1.5 \times 1.0 \times 0.6 \times 0.002 \times 10.0 \times 1.0 = 0.02q/v^2$$

Մեկ տարում առաջացող փոշու քանակը կկազմի՝

$$Q'_1 = 260 \times 8.0 \times 0.6 \times 0.25 \times 3600 \times 0.02q/v^2 = 0.0234 \text{տ/տարի}$$

0.6 - գործակից է, որը հաշվի է առնում շոգ ու չոր եղանակների տևողությունը տարում:

0.25 - գործակից է, որը հաշվի է առնում ավտոինքնաթափի շարժման տևողությունը հերթափոխում:

2. Բարձրման աշխատանքների ժամանակ առաջացող փոշու հաշվարկը

Բարձրման աշխատանքների ժամանակ առաջացող փոշին հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$Q_2 = (P_1 \times P_2 \times P_3 \times P_4 \times P_5 \times G \times 10^6 \times B \times P_6) / 3600 \text{ տ/ժամ, որտեղ}$$

P_1 - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է գրունտերում, 0.05

P₂ – 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում, 0.02

P₃ - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու միջին արագությունը, 1.2

P₄ - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.6 (հաշվի առնելով բնական խոնավությունը և ջրցանի հանգամանքը)

P₅ - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.2

P₆ - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

B - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը, 0.6

G – բարձվող բեռնվող զանգվածի քանակը՝ 1.174 տ/ժամ:

$$Q_2 = (0.05 \times 0.02 \times 1.2 \times 0.6 \times 0.2 \times 1.174 \times 10^6 \times 0.6 \times 1.0) / 3600 = 0.0282 \text{ գ/վրկ:}$$

Տարեկան՝

$$260 \text{ օր/տարի} \times 8 \text{ ժամ/օր} \times 3600 \text{ վրկ/ժամ} \times 0.028 \text{ գ/վրկ} : 10^6 \text{ գ/տ} = 0.21 \text{ տ/տարի:}$$

3. Պահեստում պահեստավորված հումքի մակերևույթ.

Ցեմենտի արտադրության ընթացքում նյութի փաստացի միջին մակերևույթը, հաշվի առնելով նրա հաստվածքի ռելիեֆը կազմում է 500մ²:

Փոշու արտանետվող քանակը՝

$$Q_3 = K_3 \times K_4 \times K_5 \times K_6 \times K_7 \times q_1 \times F \text{ գր/վրկ;}$$

Որտեղ՝

K₃= 1.2 գործակից, կախված քամու արագությունից

K₄ = 0.2 գործակից, կախված տեղական պայմաններից

K₅ = 0.4 գործակից, կախված ապարների խոնավությունից

K₆ = 1.3 գործակից, կախված մակերևույթի պրոֆիլից

K₇ = 0.2 գործակից, կախված նյութի մեծությունից

q₁ = 0,002 - (1.0մ² փաստացի մակերևույթից փոշու անջատումը);

F = 500 մ² - փոշիացման մակերեսը:

Այսպիսով՝

$$Q_3 = 1.0 \times 0.2 \times 0.4 \times 1.3 \times 0.2 \times 0.002 \times 500 = 0.02 \text{ գր/վրկ};$$

Մեկ տարում առաջացած փոշու քանակը կկազմի.

$$Q'_3 = 365 \times 0.6 \times 24 \times 3600 \times 0.02 \text{ գր/վրկ} = 378432 \text{ գր/տարի} = 0.38 \text{ տ/տարի};$$

Մեկ տարում առաջացած փոշու քանակը կկազմի.

$$\Sigma Q'_{\text{գում.}} = Q'_1 + Q'_2 + Q'_3 = 0.02 + 0.21 + 0.38 = 0.61 \text{ տ/տարի};$$

Ցեմենտի արտադրության աշխատանքների ժամանակ վառելիքի տարեկան ծախսը կկազմի՝ 32 տ/տարի, միջին օրեկան ծախսը կկազմի՝ 0.12տ կամ 120կգ/օր: Ծանր տեխնիկայի և բեռնատար մեքենաների աշխատանքը կիրականացվի առավելագույնը 2080 ժամ/տարեկան: Վառելիքի այրման ընթացքում առաջացող վնասակար նյութերի արտանետումները բերված են աղյուսակում: Աղյուսակում միավորվել են ածխաջրածինները, ինչպես նաև ազոտի օքսիդները:

Ավտոմեքենայի կատեգորիան	Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումները, գ/կգ	Արտանետումները, գ/վրկ	Արտանետումները, տ/տարի
Մեծ բեռնունակության ավտոտրանսպորտ	CO	36.4	0.157	1.17
	CH	8.4	0.036	0.27
	NO _x	42.3	0.18	1.35
	ՊՄ	4.3	0.019	0.14

Ծծմբային անհիդրիդ

Ծծմբային անհիդրիդի (SO₂) արտանետումները հաշվարկվում են ելնելով այն մոտեցումից, որ վառելիքում պարունակվող ամբողջ ծծումբը լիովին վերածվում է SO₂-ի: Այդ դեպքում կիրառվում է CORINAIR գույքագրման համակարգի բանաձևը.

$$E_{SO_2} = 2 \Sigma k_s \cdot b, \text{ որտեղ՝}$$

k_s-ը վառելիքում ծծմբի միջին պարունակությունն է՝ 0.002 տ/տ

b –ն վառելիքի ծախսն է՝ 32 տ/տարի

$$SO_2 = 2 \times 32 \times 0.002 = 0.128 \text{ տ/տարի կամ } 0.017 \text{ գ/վրկ};$$

Տնտեսական վնասը

Ցեմենտի արտադրության ընթացքում հիմնական ազդեցությունը պայմանավորված է վնասակար նյութերի մթնոլորտային արտանետումներով:

Տնտեսական վնասը դա շրջակա միջավայրին հասցված վնասի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների արժեքն է, արտահայտած դրամական համարժեքով:

Տնտեսական վնասի հաշվարկը կատարված է ըստ ՀՀ կառավարության 2005թ-ի հունվարի 25-ին ընդունած՝ «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ»-ի:

Յուրաքանչյուր արտանետման աղբյուրի համար տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է հետևյալ բանաձևով՝

$$U = \tau_q \Phi_g \sum \varphi_i \Phi_i \quad (1),$$

որտեղ՝

U-ն ազդեցությունն է, արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամներով,

τ_q -ն աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, համաձայն նշված կարգի 9-րդ աղյուսակի՝ արդյունաբերական տարածքի համար, որի շարքին դասվում է արտադրամասի տարածքը, ընդունվում է 4:

φ_i -ն i-րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է, համաձայն նշված կարգի 10-րդ և 11-րդ աղյուսակների՝ անօրգանական փոշու համար՝ 10, ածխածնի օքսիդի համար՝ 1, ազոտի երկօքսիդի համար՝ 12.5, ծծմբի անհիդրիդի համար՝ 16.5, ածխաջրածինների համար՝ 1.26, մրի համար՝ 41.5:

Φ_i -ն տվյալ (i-րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է,

Φ_g -ն փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է՝ ելնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից:

Սույն կարգի համաձայն՝ $\Phi_g = 1000$ դրամ:

Ք_i գործակիցը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Ք}_i = q (3 S_{ui} - 2 U\text{Թ}U_i), S_{ui} > U\text{Թ}U_i \quad (2)$$

որտեղ՝

$U\text{Թ}U_i$ -ն i -րդ նյութի սահմանային թույլատրելի տարեկան արտանետման քանակն է՝ տոննաներով: Հաշվի առնելով, որ վնասակար նյութերի արտանետումների սպասվելիք մերձգետնյա կոնցենտրացիաները գտնվում են թույլարտելի նորմերի սահմաններում, փաստացի արտանետումները ընդունվում են որպես $U\text{Թ}U$:

S_{ui} -ն i նյութի տարեկան փաստացի արտանետումներն են՝ տոննաներով, անօրգանական փոշի՝ 0.61, ածխածնի օքսիդ՝ 1.7, ածխաջրածիններ՝ 0.27, ազոտի երկօքսիդ՝ 1.35, ծծմբային անհիդրիդ 0.13, մուր՝ 0.14:

$$q = 1,$$

$$U = \tau_q \Phi_g \sum \text{Վ}_i \text{Ք}_i = 4 \times 1000 \times \{10 \times 0.61 + 1 \times 1.7 + 1.26 \times 0.27 + 12.5 \times 1.35 + 16.5 \times 0.16 + 41.5 \times 0.14\} = 33.46 \text{ հազ. դրամ:}$$

$$\text{ՕԱԳ} = 33.46 \text{ հազ. դրամ:}$$

Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասը կազմում է.

$$\text{ՎՏ} = 0.0 \text{ հազ.} + 0.0 \text{ հազ.} + 33.46 \text{ հազ.} = 33.46 \text{ հազ. դրամ:}$$

3.6 ԱՂՄՈՒԿ ԵՎ ԹՐԹՌՈՒՄ

Աղմուկը և թրթռումները կապված են լինելու տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է N2-III-11.3՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» սանիտարական նորմերով: Համապատասխան

բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում աղմուկի և թրթռումների մակարդակը արտադրամասի հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը: Բնակելի տարածքում աղմուկի մակարդակի նորման կազմում է 45 դԲԱ:

Աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական և արտադրական բնույթի աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին,

- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործվելու են սարքին վիճակում,

- պարբերաբար ստուգվելու և կարգաբերվելու են տրանսպորտային միջոցների շարժիչները,

- բացառվելու են օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ,

- օգտագործվող տեխնիկան և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,

- պահպանվելու են աղմուկի, վիբրացիայի թույլատրելի նորմերը:

Սանիտարա-պաշտպանիչ գոտի

Համաձայն ՀՀ տարածքում գործող СН 245-71 սանիտարական նորմի (**Производства строительной промышленности, Класс II. Санитарно-защитная зона размером 500 м, 4. Производство портландцемента, шлакопортландцемента и др. в количестве до 150000 т/год**), ցեմենտի մինչև 150.0հազ.տ տարեկան արտադրողականություն ունեցող արտադրամասերի համար, որի մեջ մտնում է նաև սույն հայտով նախատեսվող արտադրամասը (75.0հազ.տ/տարի) սանիտարա-պաշտպանիչ գոտու շառավիղը կազմում է 500.0մ: Ստորև, իրադրային հատակագծի վրա ցուցադրվում է արտադրամասի սանիտարա-պաշտպանիչ գոտու սխեմատիկ պատկերը:



Սանիտարա-պաշտպանիչ գոտու սահմանները.

Ինչպես երևում է պատկերից՝ Արագածավան բնակավայրի, որի վարչական տարածքում գտնվում է կառուցապատվող արտադրամասը, բնակելի հատվածը գտնվում է շատ ավելի մեծ հեռավորության վրա (նվազագույն հեռավորությունը բնակելի տներից կազմում է առնվազն 1400մ), քան արտադրամասի սանիտարական նորմերով սահմանված սանիտարա-պաշտպանիչ գոտին է:

3.7 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, քամիների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ:

Կառույցների հիմքերի փոստրակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ պարտադիր է ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի գնումը և համապատասխան մասնագետի (երկրաբան) եզրակացությունը:

Հակահրդեհային պաշտպանության նպատակով նախատեսվում է հակահրդեհային 5տ տարողության ջրի բաք:

Շինարարության փուլում տեղադրվելու են տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է տեղեկատվություն արտադրամասի նախագծողի, կապալառուի և այլ պատասխանատու անձանց (հեռախոսահամար), շինությունության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն:

Օդափոխվող և օդամշակման սարքերի տեղադրումն իրականացվելու է ըստ վերջիններիս նշանակության, միկրոկլիմայի պարամետրերի, ըստ շահագործման ռեժիմի, հրդեհային բաժանմունքների և պայթյունահրդեհային վտանգավորության կատեգորիաների:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմաններում, որոնք նպաստում են գետնամերձ շերտում վնասակար նյութերի կուտակմանը, ցրման գործընթացների դանդաղեցման պատճառով հնարավոր են վնասակար նյութերի կոնցենտրացիաների զգալի բարձրացումներ:

Ընդունված են անբարենպաստ օդերևութաբանական պայմանների 3 կատեգորիաներ: Նորմատիվ ակտերով դրանց հստակ չափորոշիչները բացակայում են: Ըստ կատեգորիաների տարբերակումը կատարվում է հետևյալ ընդհանուր սկզբունքների հիման վրա.

- I կատեգորիա՝ քամու արագության նվազում
- II կատեգորիա՝ անհողմություն, չոր եղանակ
- III կատեգորիա՝ անհողմություն, թանձր մառախուղ

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների դեպքում նախատեսված է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- ա. I կատեգորիա՝ խստացնել տեխնոլոգիական գործընթացների հսկողությունը
- բ. II կատեգորիա՝
 - դադարեցվում է պեռլիտի բեռնաթափման գործընթացը
- գ. III կատեգորիա

- դադարեցվում է ցեմենտի բեռնման գործընթացը

Արտադրության փուլում գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսված միջոցառումներն են.

- արտադրական հրապարակն ապահովված է լինելու հակահրդեհային միջոցառումների վահանակներով՝ կրակմարիչներով հիդրատներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով,

- արտադրական հրապարակը ժամանակ առ ժամանակ մաքրվելու է հրդեհավտանգ և պայթուցավտանգ թափոններից,

- տեղադրվելու է համապատասխան տարողության ջրի բաք՝ հրդեհաշիջման նպատակով,

- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական և արտադրական աշխատանքները դադարեցվելու են,

- տեղադրվելու են ձայնային ազդանշաններ՝ վթարների կանխարգելման համար,

- հեղուկ և վտանգավոր նյութերը պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

3.8 ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Շինարարական և արտադրական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ:

Շինաշխատանքները կատարվելու են պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոններն՝ ըստ ՇՆԵԿ-3-480* նորմերի:

Շինարարության և արտադրության փուլերում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.

- պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը,

- պահպանվելու է ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2.8-0 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,

- մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների,

- ստուգվելու և ատեստավորվելու են բանվորների գիտելիքները, տեղադրվելու են համապատասխան ցուցանակներ,

- աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական արտահագուստ,

- աշխատողներն ապահովված են լինելու առաջին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ և այլն), էլեկտրական սարքավորումների հետ աշխատողները՝ դիէլեկտրիկ գորգով և ձեռնոցներով,

- աշխատողների համար նախատեսվելու է սանիտարական և հանգստի պայմաններ (ժամանակավոր՝ տնակ, հանդերձարան և այլն), որն ապահովված է լինելու անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան, ջեռուցիչ և այլն),

- արտադրական հրապարակում և հարակից տարածքում տեղադրվելու են աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ,

- վերահսկվելու է աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառվելու է գործնության վայրում խոտանված բեռնիչ սարքերի կուտակումները,
- վերահսկվելու է մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառվելու են մեքենաների կուտակումները,
- նվազագույնի են հասցվելու ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,
- ավտոմեքենաները շինհրապարակից դուրս են գալու միայն մաքուր վիճակում՝ շրջակա տարածքը չաղտոտելու նպատակով,
- բացառվելու է ավտոամբարձիչի սլաքի աշխատանքը՝ սահմանազատված սահմանից դուրս,
- բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ օգտագործվող բեռնամբարձիչ մեքենաները, բեռնաբեռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին,
- տեղադրվելու են լրացուցիչ լուսավորման սարքեր՝ շինհրապարակի լուսավորության համար:

3.9 ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Գործունեության և մոտակա տարածքներում բացակայում են պատմամշակութային արժեք ունեցող պատմամշակութային և բնության հուշարձանները: Ուստի հնարավոր ազդեցությունների մեղմման միջոցառումներ չի նախատեսվում:

Միաժամանակ շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները

կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

3.10 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

Շինարարության և շահագործման ընթացքում բացվելու են նոր աշխատատեղեր:

Շինարարության փուլում աշխատելու է 7 մարդ, որից 1 մարդ ճարտարապետա-տեխնիկական անձնակազմ՝ հերթափոխային գրաֆիկով:

Հերթափոխով աշխատող մարդկանց թիվը կազմելու է 7 մարդ: Աշխատելու են 6 օր՝ 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով:

Շահագործման ընթացքում աշխատողների քանակը կազմելու է 10 մարդ:

Շինարարության և արտադրության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակում կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումներ չեն նախատեսվում:

Ցեննետի արտադրամասի կառուցապատման և շահագործման ընթացքում բացվելու են նոր աշխատատեղեր:

- նոր աշխատատեղերը նպաստելու են համայնքի ու շրջակա բնակավայրերի բնակչության եկամուտների ավելացմանը,

- բնակչության զբաղվածության աճին:

Կատեղծվեն լրացուցիչ նոր աշխատատեղեր և նախատեսվում է ցեմենտի արտադրության աշխատանքների մեջ ընդգրկել Արագածավան բնակավայրի բնակիչներին: Նախատեսվում է նաև անապահով ընտանիքներին դրամական օգնություն:

Միաժամանակ, գործողություններ են իրականացվելու սոցիալապես անապահով և խոցելի բնակչությանը տրամադրվող սոցիալական աջակցության գերազանցապես դրամական ձևերից միջնաժամկետ հեռանկարում համալիր փաթեթների տրամադրմանն աստիճանական անցում կատարելու ուղղությամբ:

Ներկայացվում է համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում նախատեսվող տարեկան պարտավորությունների նախնական չափը և ժամկետները՝

h/h	Պարտավորությունների անվանումը	Կատարման ժամկետը	Ներդրումների չափը, հազ.դրամ
1.	Համայնքապետարանի կողմից իրականացվող ծրագրերին ֆինանսական մասնակցություն	Յուրաքանչյուր տարի	200.0
2.	Համայնքային ծրագրերով իրականացվող շինարարական աշխատանքներին մասնակցություն	Յուրաքանչյուր տարի	Ցեմենտի տրամադրում շուկայականից ցածր գներով
3.	Համայնքի բարեկարգման աշխատանքներին մասնակցություն	Յուրաքանչյուր տարի	Տեխնիկայի տրամադրում

Արտադրամասի աշխատանքի ողջ ժամանակահատվածում պարբերաբար կազմակերպվելու են խորհրդակցություններ համայնքի ավագանու և բնակչության հետ, նրանց ներգրավելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացի մեջ:

Շինարարության փուլում հնարավոր սոցիալական խնդիրներից խուսափելու համար նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները կատարվելու են սահմանված ժամերին՝ ցերեկը,

- բացառվելու են շինհրապարակից դուրս աղբի և մեքենաների կուտակումները,

- գործելու է բողոքների արձագանքման ընթացակարգը:

3.11 ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՆԱԶԱՊԱՏՈՒՄ

Լանդշաֆտ. նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում (ազդեցության գոտում) լանդշաֆտի վրա վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում, քանի որ գործունեությունն իրականացվելու է կառուցապատված տարածքում:

Շինարարության փուլում նախատեսված շինարարական աշխատանքների ազդեցությունը բնական լանդշաֆտի վրա կլինի նվազագույն՝ կրելով սահմանափակ և կարճատև բնույթ: Դրանք հնարավոր կլինի նվազեցնել շինարարության փուլում՝ բնապահպանական կառավարման պլանով նախատեսված միջոցառումների արդյունքում:

Բարեկարգում. շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.

- շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են և հեռացվելու են տարածքից,

- շինարարական հրապարակը մաքրվելու է թափոններից,

- կատարվելու են գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

Նախատեսվող կանաչապատման տարածքի մակերեսը համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի կազմում է շուրջ 6310.0քմ: Կանաչապտում. գործունեության ենթակա ազատ տարածքի վրա նախատեսվում է կատարել որոշակի կանաչապատման աշխատանքներ՝ խոտածածկի և ծաղիկների տեսքով: Դրանք ձեռք կբերվեն այգեգործական մասնագիտական խանութներից:

Կանաչապատ տարածքի համար ոռոգումը կատարվելու է համայնքային նշանակության գոյություն ունեցող ոռոգման ցանցից՝ պայմանագրային հիմունքներով:

Կանաչապատ տարածքի ոռոգումը կատարվելու է Փ89 վերգետնյա պլաստիկ խողովակներով ցնցուղային եղանակով:

Ոռոգման նպատակով ջրապահանջը որոշվում է СНиП 2.04.02-84-ի համաձայն (1մ² ոռոգման նպատակով անհրաժեշտ է 0,3-0,4լ ջուր), հետևաբար.

$$W = (M \times 0,4) \times m$$

Որտեղ, M – կանաչապատման ենթակա տարածքն է ըստ կանաչապատման տեսակային կազմի,

m – ոռոգման հաճախականությունը կախված սեզոնից և կլիմայական առանձնահատկությունից,

հետևաբար,

$$W = 6310 \times 0,4 \times 25 = 63100 \text{լ/ջուր կամ } 63,1 \text{մ}^3 \text{/տարի ջուր:}$$

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ

Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի և հսկողություն իրականացնող այլ մարմինների կողմից նախատեսվող կանոնավոր հսկողություն է: Այդ նպատակով նախատեսվում է.

Շինարարական փուլ.

- համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում,
- բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության տեխնիկական վերահսկողություն՝ ամենօրյա ռեժիմով,
- տեխնիկական վերահսկողություն իրականացնող կազմակերպությունը կամ անձը պարտավոր է ժամանակին Պատվիրատուին և/կամ նախագծային կազմակերպությանը տեղեկացնել՝ նկատած անհամապատասխանությունները,
- բոլոր աշխատողներն իրազեկվելու են աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին,

- խստիվ պահպանվելու են շինարարության կանոնները և անձնական պաշտպանության նորմերը,
- հակահրդեհային պահանջների՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերին համապատասխանության պահպանում,
- թափոնների տեղափոխում՝ համապատասխան պայմանագրերի հիման վրա,
- կապալառուի կողմից ապահովվելու է նախագծով նախատեսված բոլոր աշխատանքների պատշաճ իրականացումը,
- կատարվելու է ամբարձիչի ժամանակի և բեռնունակության օգտագործման պարբերաբար և դիտողական ստուգում,
- իրականացվելու են տեխնիկայի և մեքենաների համապատասխան արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառվելու նպատակով,
- բնակչության հնարավոր բողոքների դեպքում կիրականացվեն աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ,
- տեխնիկայի և տրանսպորտային միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը կատարվելու է արտադրական հրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում,
- նշանակվելու է արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի արտադրական հրապարակում,
- պահպանվելու է շինարարության իրականացման ժամանակացույցը,
- ապահովվելու է բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացումը:

Շահագործման փուլ.

- համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում,
- բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության տեխնիկական վերահսկողություն՝ ամենօրյա ռեժիմով,
- բոլոր աշխատողներն իրազեկվելու են աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին,
- խստիվ պահպանվելու են աշխատանքային անվտանգության կանոնները,

- հակահրդեհային միջոցների համապատասխանության պահպանում,
- թափոնների տեղափոխում՝ համապատասխան պայմանագրերի հիման վրա,
- իրականացվելու են տեխնիկայի և մեքենաների համապատասխան ստուգում՝ արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառվելու նպատակով,
- բնակչության հնարավոր բողոքների դեպքում կիրականացվեն աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ,
- տեխնիկայի և տրանսպորտային միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը կատարվելու է արտադրական հրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում,
- նշանակվելու է արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի արտադրական հրապարակում,
- նախախտեսել կենսաբազմազանության պահպանմանն ուղղված միջոցառումներ,
- ապահովվելու է բարեկարգված և կանաչապատված տարածքների պահպանմանը ուղղված միջոցառումներ:

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Մոնիթորինգի վայրը	Իրականացման ձևը	Ժամանակամիջոց	Տարեկան ծախսերը
Օդային ավազան, ջրային և հողային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի և կեղտաջրերի ներթափանցման բացառելուն ուղղված	- Փոշու և այլ օդի աղտոտիչների արտանետումների -աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ, - ջրային և հողային ռեսուրսների որակի ուսումնասիրություններ, - կեղտաջրերի հեռացման բիոզուգարանի տեղադրում - շահագործվող	Գործունեության և ենթակա տարածքում	Ստուգայցեր, գործիքային ստուգումներ	շաբաթական շաբաթական տարեկան պարբերաբար ամսական	100.0հազ. դրամ Ընթացիկ ծախսեր 90.0հազ. դրամ Ընթացիկ ծախսեր Ընթացիկ

	տեխնիկայի պարբերական ստուգումներ				ծախսեր
Կանաչապատում	Վերականգնել և բարեկարգել շրջակա տարածքը:	Գործունեության և տարածք	Ակնադիտական ուսումնասիրություն և	Շինարարական աշխատանքների ավարտից հետո	Ընթացիկ ծախսեր
Վայրի բնություն, կենսամիջավայր	Տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակի, աճելավայրերի և ապրելավայրերի տարածքի, պոպուլյացիայի փոփոխության վերահսկողություն	Գործունեության և հարակից տարածքներ	Հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում	ամսական	Ընթացիկ ծախսեր

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսված ծախսերը կազմում է տարեկան մոտ 250.0 հազար դրամ:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կներդրվի բողոքների արձագանքման մեխանիզմ (ԲԱՄ), որը հիմնականում ուղղված կլինի շահագրգիռ կողմերի և ազդակիր հասարակության կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ դժգոհությունների ստացմանը, գնահատմանն ու լուծմանը:

5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ (ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ) ՊԼԱՆ

Շինարարության փուլ

1	Օղային ավազան	Օղային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվում է.
2	Հողային ռեսուրսներ	- շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում անհրաժեշտության դեպքում կատարվելու է գրունտի խոնավացում և ճանապարհների
3	Ջրային ռեսուրսներ	ջրցան,
4	Թափոններ	- մեքենաները շին. հրապարակ մտնելու և դուրս գալու են մաքուր վիճակում, - օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են
5	Աղմուկ և թրթռում	միայն սարքին վիճակում,
6	Արտակարգ իրավիճակներ	- բացառվելու են անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով իրականացվելու են պարբերաբար ստուգումներ, - գործունեության վայր շինանյութերի և սորուն նյութերի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկ
7	Կենսաբազմազանություն	ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով, - շինհրապարակում սորուն նյութերը պահվելու են ժամանակավոր ծածկի տակ, ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով, - շինհրապարակը կազմակերպվելու է ցանկապատով և անթափանց թաղանթով, - բացառվելու է տարածքում թափոնների այրումը: Հողային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի և թափոնների ներթափանցումը կանխելու նպատակով նախատեսվում է. - շինարարական աշխատանքների ընթացքում հողային գրունտն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով, - հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրապարակում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,

	<ul style="list-style-type: none"> - շինհրապարակն ապահովված է լինելու արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար, - շինարարական նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա, - նվազագույնի է հասցվելու շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը, - շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում, - մեքենաների անիվների լվացումը կատարվելու է անիվների լվացման սարքի միջոցով: Բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարվելու է մինչ շինհրապարակից վերջիններիս դուրս գալը: <p>Գործունեության իրականացման ընթացքում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են.</p> <ul style="list-style-type: none"> - փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր, - տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացման արտադրական հոսքաջրերը հեռացվելու են բիոզուգարան, - շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կետերում, - անձրևաջրերը և շինարարական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող 1*1.5մ չափերի պարզարան, - պարզարանում մեխանիկական նստեցման հետևանքով առաջացած տիղմը՝ որպես շինաղբ, ժամանակ առ ժամանակ տեղափոխվելու է աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով, - շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում, - ջրցանման համար օգտագործվելու է միայն տեխնիկական որակի ջուր: <p>Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվելու է.</p>
--	--

	<ul style="list-style-type: none"> - շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում առկա բիոզուգարանից, - բիոզուգարանի մաքրումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմքունքներով: <p>Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին, - տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործվելու են սարքին վիճակում, - պարբերաբար ստուգվելու և կարգաբերվելու են տրանսպորտային միջոցների շարժիչները, - բացառվելու են շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ, - օգտագործվող շին տեխնիկան և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով, - աղմուկի, վիբրացիայի թույլատրելի նորմերի պահպանում: <p>Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվելու են.</p> <ul style="list-style-type: none"> - շինհրապարակն ապահովված է լինելու հակահրդեհային հիդրատներով, կրակմարիչներով և շանթարգելներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով, հակահրդեհային միջոցառումների վահանակներով, - շինհրապարակը ժամանակ առ ժամանակ մաքրվելու է հրդեհավտանգ թափոններից, - տեղադրվելու են համապատասխան տարողության ջրի բաք՝ հրդեհաշիջման նպատակով, - մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են, - տեղադրվելու են ձայնային ազդանշաններ՝ վթարների կանխարգելման համար, - հեղուկ և վտանգավոր նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
--	---

	<ul style="list-style-type: none"> - արտաքին լուսավորության, օդափոխության համակարգերով, տեսախցիկներով, - ավտոմատ հակահրդեհային ազդանշանային համակարգերով՝ հակահրդեհային հիդրատներով, կրակմարիչներով: - հրդեհի ազդանշանի դեպքում՝ տարածքների օդափոխության համակարգերի անջատում: <p>Աշխատողների աշխատանքի կազմակերպման և անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, - պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2.8-0 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները, - մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, - աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական արտահագուստ, - աշխատողներն ապահովված են լինելու 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ և այլն), էլեկտրական սարքավորումների հետ աշխատողները՝ դիէլեկտրիկ գորգով և ձեռնոցներով, - աշխատողների համար նախատեսվելու է սանիտարական և հանգստի պայմաններ (տնակ, հանդերձարան և այլն), որն ապահովված է լինելու անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան, ջեռուցիչ և այլն), - շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրվելու են աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, ճանապարհային երթևեկության արգելող նշաններ, - վերահսկվելու է աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառվելու է գործնության վայրում խոտանված բեռնիչ սարքերի կուտակումները, - վերահսկվելու է մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառվելու են մեքենաների կուտակումները,
--	--

	<ul style="list-style-type: none"> - նվազագույնի են հասցվելու ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով, - ավտոմեքենաները շինհրապարակից դուրս են գալու միայն մաքուր վիճակում՝ շրջակա տարածքը չաղտոտելու նպատակով, - բացառվելու է ավտոամբարձիչի սլաքի աշխատանքը՝ սահմանազատված սահմանից դուրս, - բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ օգտագործվող բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին, - տեղադրվելու են լրացուցիչ լուսավորման սարքերի՝ շինհրապարակի լուսավորության համար: - Արտադրամասի կառուցման ընթացքում բացվելու են նոր աշխատատեղեր, - նոր աշխատատեղերը նպաստելու են համայնքի ու շրջակա բնակավայրերի բնակչության եկամուտների ավելացմանը, <p>Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են և հեռացվելու են տարածքից, - շինարարական հրապարակը մաքրվելու է թափոններից, - կատարվելու են գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ: - տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակի, աճելավայրերի և ապրելավայրերի տարածքի, պոպուլյացիայի փոփոխություն հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում - ՀՀ կառավարության 31.07.2014 թվականի N 781 որոշման պահանջներին համապատասխան նախատեսել բուսական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ:
--	--

Շահագործման փուլ

1	Օդային ավազան	Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվում է.
2	Հողային ռեսուրսներ	- արդյունահանման աշխատանքների ընթացքում նվազագույնի հասցնել փոշու արտանետումները,
3	Ջրային ռեսուրսներ	- ճանապարհների շահագործման ընթացքում կատարվելու է գրունտի խոնավեցում և ճանապարհների ջրցան,
4	Թափոններ	- մեքենաները արտադրական հրապարակ մտնելու և դուրս գալու են մաքուր վիճակում,
5	Աղմուկ և թրթռում	- օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում,
6	Արտակարգ իրավիճակներ	- բացառվելու են անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը: Իրականացվելու են պարբերաբար ստուգումներ,
7	Կենսաբազմազանություն	<p>- արտադրամաս սորուն նյութերի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով,</p> <p>- պահեստարաններում սորուն նյութերը պահվելու են ժամանակավոր ծածկի տակ, ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,</p> <p>- բացառվելու է տարածքում թափոնների այրումը:</p> <p>Հողային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի և թափոնների ներթափանցումը կանխելու նպատակով նախատեսվում է.</p> <p>- արտադրամասը ապահովված է լինելու արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար,</p> <p>- օգտագործվող նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա,</p> <p>- նվազագույնի է հասցվելու պահվող նյութերի և թափոնների քանակը,</p> <p>- օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,</p>

	<p>Գործունեության իրականացման ընթացքում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են.</p> <ul style="list-style-type: none"> - փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր, - տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կետերում, <p>Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվելու է.</p> <ul style="list-style-type: none"> - աշխատողներն օգտվելու են տարածքում առկա բիոզուգարանից, - բիոզուգարանի մաքրումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմքունքներով: - վտանգավոր նյութերը և թափոնները հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և հեռացվելու են Կապալառու կազմակերպությունների կողմից: - հալոգեններ, դեֆլիդներ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղերը հավաքվելու է համապատասխան տարրաների մեջ և հանձնվելու է մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով: - հնարավոր արտահոսքերի դեպքում կիրառվելու են spill kit կոչված ներծծիչ կտորները, որոնք հնարավորություն են տալիս արագ ներծծելու յուղային զանգվածը, - աղտոտված լաթերը հանձնվելու են թափոնների ջերմային վնասազերծում կատարող կազմակերպություններին կամ 1/10 հարաբերությամբ խառնվում են կենցաղային աղբին և տեղափոխվում են աղբավայր: <p>Արտադրության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին, - տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործվելու են սարքին վիճակում, - պարբերաբար ստուգվելու և կարգաբերվելու են տրանսպորտային միջոցների շարժիչները, - օգտագործվող տեխնիկան և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան
--	--

	<p>խլացուցիչներով,</p> <ul style="list-style-type: none"> - աղմուկի, վիբրացիայի թույլատրելի նորմերի պահպանում: <p>Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվելու են.</p> <ul style="list-style-type: none"> - արտադրամասն ապահովված է լինելու հակահրդեհային հիդրատներով, կրակմարիչներով և շանթարգելներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով, հակահրդեհային միջոցառումների վահանակներով, - արտադրամասը ժամանակ առ ժամանակ մաքրվելու է հրդեհավտանգ թափոններից, - տեղադրվելու են համապատասխան տարողության ջրի բաք՝ հրդեհաշիջման նպատակով, - մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ արտադրական աշխատանքները դադարեցվելու են, - տեղադրվելու են ձայնային ազդանշաններ՝ վթարների կանխարգելման համար, <p>Արտադրամասը ապահովված է լինելու.</p> <ul style="list-style-type: none"> - արտակարգ իրավիճակների դեպքում ծառայելու է բնակչության համար որպես ապաստարան, - դիտարկման և վերահսկման էլեկտրոնային համակարգով համաձայն՝ ՀՀ կառավարության 12. 04.2018թ N 426-Ն որոշմամբ սահմանված պահանջների, - էլեկտրամատակարարման ավտոմատ անջատիչներով, վթարային ելքի ցուցանիշներով, հակաձիսային օդափոխության արտածման համակարգերով, - արտաքին լուսավորության, օդափոխության համակարգերով, տեսախցիկներով, - ավտոմատ հակահրդեհային ազդանշանային համակարգերով՝ հակահրդեհային հիդրատներով, կրակմարիչներով: <ul style="list-style-type: none"> - հրդեհի ազդանշանի դեպքում՝ տարածքների օդափոխության համակարգերի անջատում: <p>Աշխատողների աշխատանքի կազմակերպման և անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, - պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ
--	---

	<p>Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-0 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,</p> <ul style="list-style-type: none"> - մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, - ստուգվելու և ատեստավորվելու են բանվորների գիտելիքները, տեղադրվելու համապատասխան ցուցանակներ, - աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական արտահագուստ, - աշխատողներն ապահովված են լինելու 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ և այլն), էլեկտրական սարքավորումների հետ աշխատողները՝ դիէլեկտրիկ գորգով և ձեռնոցներով, - աշխատողների համար նախատեսվելու է սանիտարական և հանգստի պայմաններ (տնակ, հանդերձարան և այլն), որն ապահովված է լինելու անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան, ջեռուցիչ և այլն), - արտադրամասում և հարակից տարածքում տեղադրվելու են աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, ճանապարհային երթևեկության արգելող նշաններ, - վերահսկվելու է աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառվելու է գործնետության վայրում խոտանված բեռնիչ սարքերի կուտակումները, - վերահսկվելու է մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառվելու են մեքենաների կուտակումները, - նվազագույնի են հասցվելու ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով, - ավտոմեքենաները արտադրամասից դուրս են գալու միայն մաքուր վիճակում՝ շրջակա տարածքը չաղտոտելու նպատակով, - բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ օգտագործվող բեռնաբարձիչ մեքենաները,
--	---

		<p>բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին,</p> <ul style="list-style-type: none"> - տեղադրվելու են լրացուցիչ լուսավորման սարքեր՝ լուսավորության համար: - Արտադրամասի շահագործման ընթացքում բացվելու են նոր աշխատատեղեր, - նոր աշխատատեղերը նպաստելու են համայնքի ու շրջակա բնակավայրերի բնակչության եկամուտների ավելացմանը, <p>Վայրի բնության, կենսամիջավայրի ապահովելու համար նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակի, աճելավայրերի և ապրելավայրերի տարածքի, պոպուլյացիայի փոփոխություն հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում, - ՀՀ կառավարության 31.07.2014 թվականի N 781 որոշման պահանջներին համապատասխան նախատեսել բուսական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ:
--	--	--



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔ**

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ԾԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 98

26 հոկտեմբեր 2023թ.

Օրյակու

*Յնմնկրի արտադրամա, 24,2թ'12,0մ արտաքին չափերով արտադրամա
(օրյակի անվանումը,կատուցում, վերակատուցում, ուժեղացում, վերա
դրակայեմ
նախագծային փաստաթղթերի մշակման համար*

27.10.2023-27.10.2024թ

(ճանաչման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը

**Արագածոտնի մարզ, Թալին համայնք Արագածավան 1
0646**

(մարզի, համայնքի, փողոցի և

Կառուցապատող

«ԱՐՄՑԵՄԵՆՏ» ՍՊԸ , ք.Երևան , Չավարյան փողոց :

(կազմակերպության անվանումը, գրվելու վայրը, ֆիզիկական և/

Առաջադրանքի տրամադրման հիմքը

**24.10.2023թ 056/1633 հայտը, օրյակի էսքիզը և անշա
իրավունքի պետական գրանցման վկայականը**

*(կառուցապարտան նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդ
րության հաստատ*

Առաջադրանքի գործողության ժամկետը

1 տարի

(N 1 հավելվե

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒՄ

(աաստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է

1.Հողամասը գտնվում է

**Արագածոտնի մարզի Թալին համայնքի Արագածավա
րնդերքօգտագործման և այլ արտադրական օրյակի վրենը**

(հողամասի դիրքը քարտեզաչեկական մե

2.(*) Հողամասի չափերը

0,83 հա ծածկագիր 02-016-0233-0646

(հողամասի տարածությունը

3.Հողամասի առկա վիճակը

Կառուցապարված տարածք

*(ուղիների թուրազվելը, շենքերի /այլ թվում՝ քանդման ենթակա) առկա
կանաչա*

4.(*) Տրանսպորտային պայմանները

Գործարանային փողոց

(ճանապարհների առկայություն

Տնտեսագիտական և արհեստագիտական մեթոդներով կատարվող հետազոտությունները կատարվում են հետևյալ կերպով:

6.7. Կնի հոդվածներ

7. Պետք է հստակ պահանջվող և (կամ) պատմաճշգրտագին հոդվածները տարածքներ (պահանջարկի փոփոխություններ)

8.7. Հատկապես սահմանափակումներ

Ցանկազանի հոդվածով կամ կնի տարածքով:

«Հնադար» ՄՊԸ-ի սեփականություն

(կնի հոդվածագրությունների անվանո)

Չկան

(նույնպես)

Չկան

(ընդհանուր գործող ստրատեգիան, պաշտպանվող օբյեկտներ, ինժեներայ

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՇՏԱՆՔ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ

Համաձայն էքզիզ առաջարկի

(կնիով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվային դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմակերպված (և/և ձևակերպման, ցանկերի, ստրատեգիայի օրենքի պա

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)

Ըստ պահանջվող նորմերի

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)

Ըստ պահանջվող նորմերի

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)

Ըստ պահանջվող նորմերի

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառուցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

0,24

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անցրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%))

24%

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%))

76%

9.7. այլ պահանջներ

Չկան

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը

Չկան

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի

Չկան

12.1 (*) Պահանջական ցանցեր և սարքավորումներ

12.1.1 (*) ցամաքատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում

12.2 (*) էլեկտրամատակարարում

12.3 (*) գազամատակարարում

12.4 (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրը

12.5. թույլ հոսանքներ

12.6. աղբահանություն

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում

14. Բարեկարգում

15. Շինարարական նյութեր

16. Պաշտպանական կառույցներ

17. Հակահրդեհային պահանջներ

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ

19. Շրջակա միջավայրի պահպանում

20. Շինարարության կազմակերպում

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

“Պահանջներ” գոյություն ունեցող և նախագծվող ենթա

Համաձայն տեխնիկական պայմանի

(համաձայն մատակարարո

Համաձայն տեխնիկական պայմանների

(համաձայն մատակարարո

Համաձայն տեխնիկական պայմանի

(համաձայն մատակարարո

Համաձայն տեխնիկական պայմանի

(համաձայն N 1 հավելվածի 57-րդ կ'

Չկան

Պայմանագրային

Ըստ պահանջվող նորմերի

(տեխնիկական կազմակերպման, ջրանոս

Տարածքի բարեկարգում

(սանդաճության պահպանման վերաբերյալ պահանջները, /

Տեղական շինարարական նյութեր

(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները

Չկան

(պրոյեկտը իրավիճակներում մնա

Ըստ պահանջվող նորմերի

(հակահրդեհային առ

Թեքահարթակ

Ըստ պահանջվող նորմերի

(շրջակա միջավայրը վրտե

Ըստ պահանջվող նորմերի

(առաջարկություններ շինարարության հետ կապված ակտիվացմանը

27/10/2023-ից մինչև 27/10/2024-ը.

ԼՐԱՅՈՒՅԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

22.Նախագծային փաստաթղթերի
փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

Նախագծողի երաշխավորագիր

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը սահմանված փորձաք

23.Միջանկյալ համաձայնեցում

Չկա

(Իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությ
համաձայնեցում, եթե չկան առաջադրանքի փոփոխ

24.Հասարակական քննարկումներ

Չկան

(Հայաստանի Հանրապետությա

25.Համաձայնեցումների կամ մասնագիտական
եզրակացությունների ստացում

Չկան

(Ձեռնարկ և փյույկ օրենսդրության համաձայնեցում՝ օրենքով սահմանված պահա
նան N 1 հավելանքի 56-րդ կետով սահմանված ժամկետ

26.Փոստային բաժանորդային պահարանների
տեղադրում

Չկան

27.Այլ պայմաններ

Չկան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝
Կ.Տ.



ՏԱՎՐՈՍ ՍԱՓԵՅԱՆ

